Ստեփաննոս Պողոսեան



98

2000

243
9

76-ԱՀ

# ԳԻՐՔ
# ԱՂՕԹԻՑ

Վասն ամ՟ ցեղ

Պատահարաց որք գան
՚ի վերայ մարդոյն։

Յորոց ազատեսցէ զմեզ
ա՟ծ Ամէն։

Տպագրեցաւ ՚ի լոյս
ածեալ՝ Հրամանաւ
Տ՟ն Յօհաննու Ա՟ջա
բան Պատրիարգի
Կոստանդնու
պօլսոյ։

Ա Լ




8072-57

Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Աղօթք Արարեալ Տեառն Ներսէսի ու՝ Հայոց Կաթողիկոսին։

ՀԱՒԱՏՈՎ խոստովանիմ և երկրպագանեմ քեզ՝ Հայր և Որդի և Սուրբ Հոգի. անեղ և անմահ բնութիւն. արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Հաւատամ խոստովանիմ, և երկիր֊
պագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս
միասնական սբ Երրորդութի՝ և մի
ածութե · արարիչ լուսոյ և հա֊
լածիչ խաւարի · հալածեա՛ ՚ի հոգ֊
ւոյ իմմէ զխաւար մեղաց. և ան֊
գիտութե · և լուսաւորեա՛ զմիտս
իմ ՚ի ժամուս յայսմիկ՝ աղօթել
քեզ ՚ի հաճոյս և ընդունել ՚ի քէն
զխնդրուածս իմ · և ող՛՛:

Հայր երկնաւոր ած ճշմարիտ՝ որ
առաքեցեր զորդին քո սիրելի ՚ի
խնդիր մոլորելոց ոչխարին մեղայ յեր
կինս և առաջի քո · ընկա՛լ զիս որպ
զանառակ որդին՝ և զգեցո՛ ինձ ըզ
պատմուճանն զառաջին զոր մեր֊
կացայ մեղօք · և ո՛՛:

Որդի այ ած ճշմարիտ՝ որ խոնար
հեցար ՚ի հայրական ծոցոյ՝ և առեր
մարմին ՚ի սբյ կուսէն մարիամայ
վս մերոյ փրկութե · խաչեցար՝ թա֊

զգեցար՝ և յարեար 'ի մեռելոց. և համ-
բարձար փառօք առ հայր՝ մեղայ
յերկինս և առաջի քո. յիշեա զիս
ող զաւազակն յորժամ գաս ար-
քայութե̅ քով. և ող"։

Հոգի ա̅յ ա̅ծ ճշմարիտ՝ որ իջեր
'ի յորդանան և 'ի վերնատունն. և
լուսաւորեցեր զիս մկրտութե̅ սբ ա-
ւազանին մեղայ յերկինս և առաջի
քո. մաքրեա զիս վերստին ա̅ծային
հրով քով՝ ող հրեղէն լեզուօք սբ
առաքելոցն. և ող"։

Ծնեղ բնութե̅՝ մեղայ քեզ մտօք
իմովք՝ հոգւով և մարմնով իմով.
մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս՝ վ̅ս
անուան քում ս̅բյ. և ող"։

Տեսող ա̅մի՝ մեղայ քեզ խորհր-
դով բանիւ և գործով. ջնջեա զձե-
ռագիր յանցանաց իմոց՝ և գրեա
զանուն իմ 'ի դպրութե̅ կենաց. և"։

Քննող գաղտնեաց՝ մեղայ քեզ

 կա-

կամայ և ակամայ՝ գիտութ՟ և ան-
գիտութ՟․ թողութ՟ շնորհեա մե-
ղաւորիս զի 'ի ծննդենէ ո՟ր աւա-
զանին մինչև ցայսօր մեղուցեալ
եմ առաջի ա՟ծութ՟եդ քո․ զգայա-
րանօք իմովք՝ և ամենայն անդամօք
մարմնոյս․ և ողոր՟։

Ամենախնամ տ՟ր՝ դիր պահապան
աչաց իմոց զերկիւղ քո ո՟ր՝ ոչ ևս
հայիլ յարատ․ և ականջաց իմոց
ոչ ախորժել լսել զբանս չարութ՟ե․ և
բերանոյ իմոյ ոչ խօսիլ զսուտ՟․ և
սրտի իմոյ ոչ խորհիլ զչարութ՟․ և
ձեռաց իմոց ոչ գործել զանիրա-
ւութ՟․ և ոտից իմոց ոչ գնալ 'ի ճա-
նապարհս անօրէնութ՟ե․ այլ ուղ-
ղեա զշարժումն սոցա լինել միշտ
ըստ պատուիրանաց քոց յա՟մի․ և՟։

Հուր կենդանի քո՝ զհուր սիրոյ
քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա
յանձն իմ․ զի այրեսցէ զախտ հոգ-

ւոյ իմոյ եւ սրբեսցէ զխիղճ մտաց
իմոց՝ եւ մաքրեսցէ զմեղս մարմնոյ
իմոյ . եւ վառեսցէ զլոյս գիտութեան
քո ՚ի սրտի իմում . եւ ող՚՚:

Իմաստութի՛ւն Հօր յա̃, տո՛ւր ինձ ի-
մաստութիւն զբարիս խորհիլ եւ խօ-
սիլ եւ գործել առաջի քո յամենայն ժամ.
՚ի չար խորհրդոց՝ ՚ի բանից եւ ՚ի
գործոց փրկեա զիս . եւ ող՚՚:

Կամեցօ՛ղ բարեաց ո̃ր կամարար՝
մի՛ թողուր զիս ՚ի կամս անձին իմոյ
գնալ . այլ առաջնորդեա ինձ լի-
նել միշտ ըստ կամաց քոց բարեսի-
րաց . եւ ողորմեա քո ա՚՚:

Արքա՛յ երկնաւոր տո՛ւր ինձ զար-
քայութիւն քո զոր խոստացար սիրե-
լեաց քոց եւ զօրացո՛ զսիրտ իմ ա-
տել զմեղս՝ եւ սիրել զքեզ միայն՝
եւ առնել զկամս քո . եւ ող՚՚:

Խնամօ՛ղ արարածոց պահեա նշա-
նաւ խաչի քո զհոգի եւ զմարմին

 իմ.

իմ'ի պատրանաց մեղաց, 'ի փորձութեց դիւաց. և'ի մարդոց անիրաւաց և յամ վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ող":

Պահապան ամի քո աջ քո հովանի լիցի 'ի վր իմ 'ի տուէ և 'ի գիշերի 'ի նստիլ 'ի տան՝ 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և'ի յառնել՝ զի մի՛ երբէք սասանեցայց. և ող":

Ա.Ծ իմ, որ բանաս զձեռն քո և լնուս զամ արարածս ողորմութբ քով. քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա և պատրաստեա ըզպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտեան. և":

Դարձուցիչ մոլորելոց՝ դարձո զիս 'ի չար սովորութեց իմոց 'ի բարի սովորութի. և բևեռեա 'ի հոգի իմ զսոսկալի օր մահուն և զերկիւղ գեհենոյն՝ և զսէր արքայութեն. զի զղջացայց 'ի մեղաց՝ և գործեցից

զարդարութիւն. և ո՛"։
Աղբիւր անմահութեան աղբերացո՛ ՚ի
սրտէ իմմէ զարտասուս ապաշխա-
րութեան որպէս պոռնկին. զի լուացից
զմեղս անձին իմոյ՝ յառաջ քան
զելանելն իմ յաշխարհէս. և ո՛"։
Պարգև ինձ ողորմութեան՝ պարգևեա
ինձ ուղղափառ հաւատով և բարի
գործով և սուրբ մարմնոյ և արեան
քո հաղորդութեամբ գալ առ քեզ. և ո՛"
Բարերար Տէր՝ հրեշտակի բարւոյ
յանձն արասցես զիս՝ քաղցրութեամբ
աւանդել զհոգի իմ. և անխռով
անցուցանել ընդ չարութիւն այսոցն
որք են ՚ի ներքոյ երկնից. և ո՛"։
Լոյս ճշմարիտ Քրիստոս՝ արժանաւորեա
զհոգի իմ ուրախութեամբ տեսանել
զլոյս փառաց քոց, ՚ի կոչման ա-
ւուրն և հանգչել յուսով բարեաց
յօթևանս արդարոց, մինչև յօր
մեծի գալստեան քո. և ո՛"։

Դատաւոր արդար յորժամ գաս
փառօք Հօր՝ դատել զկենդանիս և
զմեռեալս, մի՛ մտաներ ՚ի դատաստա_
տան ը̅ ծառայի քում. այլ փրկեա՛
զիս ՚ի յաւիտենական հրոյն՝ և լսե_
լի՛ արա ինձ զերանաւէտ կոչումն
արդարոց յերկնից արքայութի̅դ. և"։
Ամենողորմ տ̅ր՝ ողորմեա՛ ա̅մ հա_
ւատացելոց ՚ի քեզ՝ իմոց և օտարաց՝
ծանօթից և անծանօթից՝ կենդա
նեաց և մեռելոց. շնորհեա՛ և թշ_
նամեացն իմոց՝ և ատելեացս թո_
ղութի̅ որք առ իս յանցանացն. և
դարձո՛ զն̅ս ՚ի չարեացն զոր ունին
վ̅ն իմ, զի ողորմութե̅դ քում արժա
նի եղիցին. և ողոր"։
Փառաւորեալ տ̅ր՝ ընկալ՛ զաղաչանս
ծառայիս քո և կատարեա՛ ՚ի բա_
րի զխնդրուածս իմ. բարեխօսու_
թե̅ սրբուհւոյ ա̅ծածնին՝ և յով_
հաննու մկրտչին՝ և սրբոյն ստե_

փան_

փոխնոսի նախավկային՝ և որոցն գրիգորի մերոյ լուսաւորչին, և որոց առաքելոց՝ մարգարէից՝ վարդապետաց մարտիրոսաց՝ հայրապետաց՝ ճգնաւորաց՝ կուսանաց՝ միանձանց՝ և ամ՟ որոց քոց երկնաւորաց և երկրաւորաց։ Ընդ քեզ փառք և երկրպագութի՟ անբաժանելի որ երրորդութեդ՝ յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

## Աղօթք Պաշտպանութե՟։

Անսկիզբն Ա՟ծ՝ անեղ Ա՟ծ՝ անիմանալի Ա՟ծ՝ անպարագրելի ա՟ծ՝ անծին ա՟ծ՝ ամենարքայ ա՟ծ՝ ամենարարիչ ա՟ծ՝ ամենաիշխ ա՟ծ՝ ամենագէտ ա՟ծ՝ ամենարագ ա՟ծ՝ ամենառատ ա՟ծ՝ ամենամեծ ա՟ծ՝ ամենաղբիւր ա՟ծ՝ ամենաիմաստ ա՟ծ՝



ա-

ամենարձակ ած՝ ամենատայց ած՝ ա-
մենայցելու ած՝ ամենազդու ած՝
ամենագդիչ ած՝ ամենաանց ած՝ ա-
մենարթուն ած՝ ամենաբաւ ած՝ ա-
մենաբարձրեալ ած՝ ամենաբերկրեալ
ած՝ ամենաբաւ ած՝ ամենաբաւկն
ած՝ ամենաբարի ած՝ ամենաբղժ
ած՝ ամենաբուժիչ ած՝ ամենաբուղխ
ած՝ ամենաբաշխ ած՝ ամենաբաշխօղ
ած՝ ամենագով ած՝ ամենագովելի
ած՝ ամենագովեալ ած՝ ամենագութ
ած՝ ամենագթած ած՝ ամենագտիչ
ած՝ ամենագանձ ած՝ ամենագորով
ած՝ ամենադատ ած՝ ամենադտուր
ած՝ ամենադաւնեալ ած՝ ամենադիր
ած՝ ամենադարման ած՝ ամենադար-
մանիչ ած՝ ամենաեզերիչ ած՝ ամենա-
եղբ ած, ամենազօր ած՝ ամենազօրեղ
ած՝ ամենազարդ ած՝ ամենազարդօղ
ած՝ ամենազարդարիչ ած՝ ամենա-
զեղ ած՝ ամենափրկիչ ած, ամե-



նա

նակէն ա̃ծ՝ ամէնատէակ ա̃ծ՝ ամէն
աերկինք ա̃ծ՝ ամէնասուրբ ա̃ծ՝ ա-
մէնողորմ ա̃ծ՝ ամէնամէծ ա̃ծ, ա-
մէնամիջուր ա̃ծ՝ ամէնաընտրօղ
ա̃ծ՝ ամէնաընդունակ ա̃ծ՝ ամէնա
ընդունօղ ա̃ծ՝ ամէնաըղձումն ա̃ծ՝
ամէնաթագ ա̃ծ՝ ամէնաթագուոր
ա̃ծ, ամէնաժառանգ ա̃ծ, ամէնաիշ
խան ա̃ծ՝ ամէնաիշխօղ ա̃ծ՝ ամէնա
իմաստ ա̃ծ՝ ամէնաիրաւ ա̃ծ՝ ամէ-
նալոյս ա̃ծ, ամէնալիր ա̃ծ՝ ամէնա
լրումն ա̃ծ, ամէնախնամ ա̃ծ՝ ամէ
նախնամօղ ա̃ծ՝ ամէնախօս ա̃ծ՝ ա-
մէնախրատ ա̃ծ՝ ամէնախորին ա̃ծ՝
ամէնախորհուրդ ա̃ծ՝ ամէնագթած
ա̃ծ՝ ամէնածագումն ա̃ծ՝ ամէնա
գոյլ ա̃ծ՝ ամէնածաւալ ա̃ծ, ամէ-
նակալ ա̃ծ՝ ամէնակարօղ ա̃ծ՝ ամէ
նակիր ա̃ծ՝ ամէնակրօղ ա̃ծ՝ ամէնա
կայծ ա̃ծ՝ ամէնակատար ա̃ծ՝ ամէ
նակոչ ա̃ծ՝ ամէնակէտ ա̃ծ, ամէնա

հաս ա̃ծ՝ ամէնահասու ա̃ծ՝ ամե֊
նահաստատ ա̃ծ՝ ամենահաստա֊
տիչ ա̃ծ, ամենաձիր ա̃ծ՝ ամենա֊
ձեռն ա̃ծ՝ ամենաձեռնտու ա̃ծ,
ամենաղեկավար ա̃ծ՝ ամենաղամ֊
բար ա̃ծ, ամենաճարակ ա̃ծ՝ ամե֊
նաճառագայթ ա̃ծ՝ ամէնաճշմարիտ
ա̃ծ, ամենամեծ ա̃ծ՝ ամենամա֊
քուր ա̃ծ՝ ամէնամաքրիչ ա̃ծ՝ ամէ֊
նամարդ ա̃ծ՝ ամէնամարդէչ ա̃ծ.
ամէնայար ա̃ծ՝ ամէնայարոյց ա̃ծ՝
ամենայառաջ ա̃ծ՝ ամէնայորդոր
ա̃ծ՝ ամենայորդորիչ ա̃ծ՝ ամենայոյս
ա̃ծ՝ ամենակալ ա̃ծ՝ ամենալոյս ա̃ծ,
ամենաշարժ ա̃ծ՝ ամենաշուրջ ա̃ծ՝
ամէնաշահ ա̃ծ՝ ամենաշահաւոր
ա̃ծ՝ ամենաշէն ա̃ծ, ամենողորմ ա̃ծ՝
ամենաուղղորդ ա̃ծ՝ ամենաուղիղ
ա̃ծ՝ ամէնաուժեղ ա̃ծ՝ ամէնաու֊
ռոգ ա̃ծ՝ ամենուրեք ա̃ծ՝ ամենա֊
գետ ա̃ծ՝ ամենաչափող ա̃ծ, ամենա

 պա֊

պատիւ ա̃ծ՝ ամէնապարգև ա̃ծ՝
ամենասաստիչ ա̃ծ, ամենապարզ
ա̃ծ՝ ամենապարզիչ ա̃ծ՝ ամենապահ
ա̃ծ՝ ամենապահօղ ա̃ծ՝ ամենապար
ա̃ծ՝ ամենապարագրօղ ա̃ծ՝ ամենա
պայծառ ա̃ծ՝ ամենապարգևր ա̃ծ,
ամենաջահ ա̃ծ՝ ամենաջան ա̃ծ՝ ա_
մենաջամբ ա̃ծ՝ ամենալոյս ա̃ծ, ա_
մենառատ ա̃ծ՝ ամենառատացու_
ցիչ ա̃ծ, ամենասէր ա̃ծ՝ ամենասըր
բիչ ա̃ծ՝ ամենասահման ա̃ծ՝ ամե_
նասահմանիչ ա̃ծ՝ ամենասանձ ա̃ծ՝
ամենասանձօղ ա̃ծ՝ ամենասփիւռ
ա̃ծ՝ ամենասրբօղ ա̃ծ, ամենավար
ժիչ ա̃ծ՝ ամենավարիչ ա̃ծ՝ ամենա
մաքրիչ ա̃ծ՝ ամենալայնելուչ ա̃ծ,
ամենատէր ա̃ծ՝ ամենատիրօղ ա̃ծ՝
ամենատեղ ա̃ծ՝ ամենատու ա̃ծ՝ ա_
մենատուօղ ա̃ծ՝ ամենատուն ա̃ծ՝
ամենատօն ա̃ծ՝ ամենատես ա̃ծ՝ ա_
մենատեսուչ ա̃ծ՝ ամենատիւ ա̃ծ.



ա_

ամենարարբուն ա̃ծ՝ ամենարարիչ ա̃ծ, ամենացօղ ա̃ծ՝ ամենացայտ ա̃ծ՝ ամենագայդ ա̃ծ՝ ամենացնծու-թի ա̃ծ՝ ամենացանէ ա̃ծ՝ ամենա-ցանկալի ա̃ծ, ամենափառք ա̃ծ՝ ա-մենափայլ ա̃ծ՝ ամենափայլօղ ա̃ծ՝ ամենափայլեալ ա̃ծ՝ ամենափայլիչ ա̃ծ՝ ամենափոյթ ա̃ծ՝ ամենափրկօղ ա̃ծ՝ ամենափրկիչ ա̃ծ, ամենաքաւ ա̃ծ՝ ամենաքաւիչ ա̃ծ՝ ամենաքա-րող ա̃ծ՝ ամենաքարոզիչ ա̃ծ, ան-ձառ ա̃ծ՝ անձառ արքայ ա̃ծ՝ անձա-ռ արքայութի ա̃ծ՝ անձառ աղատութի ա̃ծ՝ անձառ աղբիւր ա̃ծ՝ անձառ արարիչ ա̃ծ՝ անձառ ապէնիազ ա̃ծ՝ անձառ արփի ա̃ծ՝ ա̃մն անձառ ադայթ ա̃ծ՝ անձառ աշաւոր ա̃ծ՝ անձառ ա-խոր ա̃ծ՝ անձառ աբարի ա̃ծ՝ անձա-ռ աբաց ա̃ծ՝ անձառ աբուղխ ա̃ծ՝ անձառ ադութ ա̃ծ՝ անձառ աղօր ա̃ծ՝ անձառ իմաստ ա̃ծ՝ անձառ ա-

լուր տէր՝ անճառածագ տէր՝ ան-
ճառագոյլ տէր՝ անճառողորմ տէր՝
անճառաչափ տէր՝ անճառապատիւ
տէր՝ անճառավէհ տէր՝ անճառա-
փառք տէր՝ անճառափայլ տէր՝ ա-
նախտ տէր՝ անեզր տէր՝ անեղծ տէր՝
անըմբռնելի տէր՝ անժամանակ տէր՝
անիմանալի տէր՝ անլուելի տէր՝ ան-
խարդախ տէր՝ անծայր տէր՝ անկեող
տէր՝ անհասանելի տէր՝ անղօղելի
տէր՝ անմեկնելի տէր՝ անյիշաչար
տէր՝ աննինջ տէր՝ անշարժ տէր՝ անո-
խակալ տէր՝ անչարչար տէր՝ անպատ-
մելի տէր՝ անկոխելի տէր՝ աննեղելի
տէր՝ անօրինակ տէր։

Բարի տէր՝ բարեմիտ տէր՝ բարի
բնուի տէր՝ բարեացբարի տէր՝ բա-
րեգութ տէր՝ բարեբաշխ տէր՝ բա-
րեբարոյ տէր՝ բարեխորհուրդ տէր՝
բարեաց պարգեւօղ տէր՝ բարեսէր
տէր։



Гос. ... Арм ССР ... А. Мясникян

Գովեալ Ա՟Ծ՝ գերիվերոյ ա՟ծ՝ գե-
րազարդ ա՟ծ՝ գոհաբանեալ ա՟ծ՝
գերապանծ ա՟ծ՝ գեղեցիկ ա՟ծ՝ գե-
րագոյն ա՟ծ՝ գթացուցիչ ա՟ծ ։
Դատաւոր Ա՟Ծ՝ դատաւորաց դէտ
ա՟ծ՝ դիտապետ ա՟ծ՝ դասաւորիչ
ա՟ծ՝ դաւանեալ ա՟ծ՝ դասուց վեր-
նոց ա՟ծ՝ դեղ կենաց ա՟ծ՝ դրախտ
ա՟ծ՝ դաստիարակօղ ա՟ծ ։
Երրորդութիւն Ա՟Ծ՝ երկինք ա՟ծ՝
երկնաւորաց ա՟ծ՝ երկրաւորաց ա՟ծ ։
Զօրաւոր Ա՟Ծ՝ զօրեղ ա՟ծ՝ զուա-
րթնոց ա՟ծ՝ զարդարօղ ա՟ծ՝ զար-
մանք ա՟ծ՝ զարմանալի ա՟ծ՝ զարհու-
րելի ա՟ծ ։
Էրրեակ և մի ա՟ծ՝ էրանել ա՟ծ՝ էա-
կան ա՟ծ՝ էացուցիչ ա՟ծ՝ էութի ա՟ծ ։
Թագաւորաց Ա՟Ծ՝ թաքեալ ա՟ծ՝
թողիչ մեղաց ա՟ծ՝ թաղելոց յարու-
թի ա՟ծ՝ թշնամեաց սաստակիչ ա՟ծ ։
Ժառանգութի Ա՟Ծ՝ ժամանեալ

 ա՟ծ՝

ած՝ ժամանօղ ած՝ ժամանից ած ։
Իսկզբանէ Ը.Ծ՝ ինքնակամ ած՝
ինքնագոյ ած՝ ինքնակալ ած՝ ինք
նատար ած՝ ինքնակարօղ ած՝ ինք
նիշխան ած՝ իշխօղ ած՝ 'ի բար-
ձունս ած՝ իմանալի ած ։
Լոյս Ը.Ծ՝ լոյս անստուեր ած՝ լոյս
թափանցիկ ած՝ լուսազգեստ ած՝
լուսաւորիչ ած՝ լուսազարդ ած՝
լուսատու ած՝ լուսաձեւ ած՝ լսօղ
ած՝ լիութի ած՝ լցուցիչ ած ։
Խոր անքննին Ը.Ծ՝ խաղաղուն ած՝
խաղաղարար ած՝ խնամօղ ած՝ խը
նամիչ ած՝ խրատիչ ած՝ խանդա-
ղատօղ ած՝ խորհուրդ ած՝ խոր-
հըրդապետ ած՝ խնդրուած ած՝
խորհրդագէտ ած՝ խնդրօղ ած՝
խոնարհ ած՝ խոհրդագէտ ած ։
Ծագումն Ը.Ծ՝ ծնօղ Ը.Ծ՝ ծագօղ
Ը.Ծ՝ ծարաւելոց Ը.Ծ՝ ծանուցեալ
Ը.Ծ՝ ծանուցիչ ած՝ ծառայից տր

 ած՝

ա՟ծ՝ ծածկատես ա՟ծ՝ ծածկագէտ
ա՟ծ՝ ծայր ա՟ծ ։

Կենդանի Ք՟Ս՝ կենդանարար Ք՟Ս՝ կենդանատու ա՟ծ՝ կենդանացուցիչ ա՟ծ՝ կերակրող ա՟ծ՝ կամարար ա՟ծ՝ կեանք ա՟ծ՝ կամեցող բարեաց ա՟ծ՝ կենդանի ա՟ծ՝ կատարեալ ա՟ծ՝ կառավարող ա՟ծ՝ կուրաց լուսատու ա՟ծ ։

Հայր Ք՟Ս՝ հօր որդի Ք՟Ս՝ հոգի ս՟բ ա՟ծ՝ հաւատ ա՟ծ՝ համերց լեզուատու ա՟ծ՝ հոգւոց ազատիչ ա՟ծ՝ հրածորան ա՟ծ՝ հրաւիրող ա՟ծ՝ հնաւուրց ա՟ծ՝ հարուստ ա՟ծ՝ հանուրց ա՟ծ՝ հաստատարիմ ա՟ծ ։

Ձայն Ք՟Ս՝ ձայնող ա՟ծ՝ ձեռնտու ա՟ծ՝ ձայնից լսող ա՟ծ՝ ձիր ա՟ծ՝ ձիրաբաշխ ա՟ծ ։

Ղեկավար Ք՟Ս՝ ղեկապետ Ք՟Ս՝ ղամպար Ք՟Ս ։

Ճշմարիտ Ք՟Ս՝ ճշմարտութի՟ւ ա՟ծ՝

Ճշմարտասէր ած՝ Ճարտարապետ ած՝ Ճառագայթ ած՝ Ճառագայթեալ ած՝ Ճոխ ած՝ Ճաշակ ած՝ Ճար ած՝ Ճոռոմ ած՝ Ճանապարհ ած՝ Ճանապարհ կենաց ած՝ Ճանապարհ բարեաց ած՝ Ճառ ած։

Մեծարեալ Տ՝ մեծապատիւ ած՝ մաքրիչ ած՝ մաքրութին ած՝ մաքրօղ ած՝ մահու լուծանօղ ած՝ մեղաւորաց դարձ ած։

Յայտնուն Տ՝ յաւիտեան ած՝ յաւիտենից ած՝ յարուն ած՝ յուսացելոց ած՝ յուսադրօղ ած՝ յարուցիչ ած՝ յառաջ ած՝ յանդիման ած։

Նեղելոց լոյս Տ՝ նորահրաշ ած՝ նաւապետ բարի ած։

Շնորհ Տ՝ շնորհատու Տ՝ շուրջ ած՝ շուրջանակի ած՝ շնորհօղ ած՝ շնորհաբեր ած՝ շաւիղ ած։

Ողորմած Տ՝ ողորմութին Տ՝ ու-

ղիղ ա̃ծ՝ ուղղորդ ա̃ծ՝ ուղղորդա
սէր ա̃ծ՝ ուղղորդապետ ա̃ծ՝ ուղ
ղորդախօս ա̃ծ՝ ուղղորդաբան ա̃ծ։
Չարատեաց Ի. Գ̃՝ չարատատ ա̃ծ՝
չարամերժ ա̃ծ՝ չարաբարձ ա̃ծ՝ չա
րահերձ ա̃ծ՝ չարաբաւ ա̃ծ։
Պահապան Ի. Գ̃՝ պահպանիչ Ի. Գ̃՝
պետ Ի. Գ̃՝ պետական ա̃ծ՝ պատ
ուելի ա̃ծ՝ պարունակող ա̃ծ։
Ջահ Ի. Գ̃՝ ջահալոյս Ի. Գ̃՝ ջահա
պայծառ ա̃ծ՝ ջան ա̃ծ՝ ջամբօղ ա̃ծ՝
ջերմեռանդութի̃ Ի. Գ̃։
Ռահ Ի. Գ̃՝ ռահ լոյս ա̃ծ՝ ռատա
բաշխ ա̃ծ՝ ռատափայլ ա̃ծ՝ ռետի̃ն
քաղցր ա̃ծ՝ ռահավարժ ա̃ծ։
Սբ̃ Ի. Գ̃՝ սրբուհի Ի. Գ̃՝ սաբաւօդ
Ի. Գ̃՝ սէր ա̃ծ՝ սիրելի ա̃ծ՝ սահմա
նադիր ա̃ծ՝ ստեղծօղ ա̃ծ՝ սրբոց
ա̃ծ՝ սոսկալի ա̃ծ։
Վեհ Ի. Գ̃՝ վեհագոյն ա̃ծ՝ վայել
չութի̃ ա̃ծ՝ վերակացու ա̃ծ՝ վար
ժիչ ա̃ծ։

Տէր Ի. Գ.՝ տեսող Ի. Գ.՝ տիւ Ի. Գ.՝
տուիչ բարեաց Ի. Գ.՝ տրտմեցելոց
Ի. Գ.։

Րաբուն Ի. Գ.՝ րաբունապետ Ի. Գ.՝
րախարար Ի. Գ.։

Ցնծուն Ի. Գ.՝ ցանկալի ա̃ծ՝ ցա-ւոց բժիշկ ա̃ծ՝ ցօղահոս ա̃ծ։

Փառք Ի. Գ.՝ փառաւորեալ ա̃ծ՝ փա-ռահեղ ա̃ծ՝ փառաբանել ա̃ծ՝ փրր-կիչ ա̃ծ՝ փրկող ա̃ծ՝ փարթամ ա̃ծ՝ փարատիչ ցաւոց ա̃ծ՝ փառաւոր ա̃ծ՝ փառք 'ի բարձունս ա̃ծ։

Քահանայապետ Ի. Գ.՝ քերոբէա-նիստ ա̃ծ՝ քաւիչ ա̃ծ՝ քաւութի̃ ա̃ծ՝ քաւարան ա̃ծ՝ քաւողիչ ա̃ծ՝
քննող ա̃ծ։

Օրէնք Ի. Գ.՝ օրինադիր ա̃ծ՝ օրհնիչ ա̃ծ՝ օրհնել ա̃ծ՝ օրհնաբանել ա̃ծ։

Քո ո̃ր և ահեղ անուանցդ զօ-րութ̃՝ ո̃ր Ի. Գ. ամենակալ. եղիցի
պահապան ծառայիս։



Աղօթք· վասն հալածանաց դիւաց և
հախտարդաց աղանդաւորաց · և վասն
դատապարտեալ յաղօթելոց ։



ՐԳՒԵԼՈՐ Հ.Օ.ՕՐ
ապաւէն ծառայելոց՝
փրկիչ նեղելոց՝ որ վա̃
մեր խոնարհեցար ՚ի հայրական ծո_
ցոյ և առեր մարմին ՚ի սրբոյ կուսէն
մարիամայ· վա̃ մերոյ փրկութե̃· մատ
նեցար· ըմբռնեցար· չարչարեցար·
խաչեցար և թաղեցար և յարեար·
՚ի մեռելոց՝ և համբարձար փառօք
առ հայր· զարթո զզօրութի̃ քո և
եկ ՚ի կեցուցանել զգինս արեան
քոյ տէր· և մի՛ տար գրել սայի
զքո փրկեալքս· և մի՛ տար ըն̃ա_
կութի̃ չարին՝ զտաճար անուանդ
քում սրբոյ· և մի՛ զլքեալս քեզ
մարմին և անդամ թողուլ ՚ի կո_
խումն և ՚ի կատականս չարին· այլ



գթա

գթա՛ 'ի քո արարածս արարչական
սիրով. տր̄ ողորմեա՛ մեզ. զի 'ի խաչ
քո պարծելով պարծեցաք և պա_
հելով պահեսցէ զմեզ յերևելի և
յաներևոյթ թշնամւոյն. և լիցի պա
հապան ծառայիս քոյ ամէն ։

Զար իշխանքն հալածին. որք ընդ
ծառայս քո մարտնչին. երևելով
նշան խաչին. աներևոյթք կոր_
ծանեսցին ։

ՄԷ աւետարանն՝ որ ըստ Մատթէոսի.

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն
Յս̄. զհետ եղեն նր̄ կոյրք եր
կու աղաղակէին՝ և ասէին, ողոր_
մեա՛ց մեզ՝ որդի դաւթի ։ Եւ իբ
րև եկն 'ի տուն. մատեան առ նա
կոյրքն. և ասէ ցնս̄ Յս̄. հաւա_
տա՞յք եթէ կարող եմ առնել ձեզ
զայդ ։ ասեն ցնա, այո՛ տր̄ ։ Յայն_


ժամ

ժամ մերձեցաւ յաչս նց՝ և ասէ ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ: Եւ բացան աչք նց, և սաստեաց նց Յս և ասէ. զգո՛յշ կացէք՝ մի՛ ոք գիտասցէ: Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամ երկիրն ընդ այն: Եւ յելանելն նց արտաքս, ահա մատուցին առ նա այր մի համր դիւահար: Եւ յելանելն դիւին խօսեցաւ համրն և զարմացան ժողովուրդքն՝ և ասեն. թէ և ոչ երբեք երեւեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի: Իսկ փարիսեցիքն ասէին. իշխանաւն դիւաց հանէ զդեւս:

## ՄԷ Աւետարան՝ որ ըստ Մարկոսի:

Եւ ել լուր նր ընդ ամ կողմն Գալիլեացւոց: Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովրդենէն եկն ի



տուն

տուն սիմօնի և անդրէայ՝ յակոբու և յօհաննու հանդերձ։ Եւ զո-քանչ սիմօնի դնիւր ջերմացեալ և վաղվաղակի ասեն ցնա վ՟ս ն՟ր։ Եւ մատուցեալ յարոյց զնա կա-լեալ զձեռանէ նորա և եթող զնա տենդն և պաշտէր զն՟ս։ Եւ իբրև երեկոյ եղև ՚ի մտանել արեգականն բերէին առ նա զա՟մ հիւանդս և զդիւահարս։ Եւ էր ա՟մ քաղաքն ժողովեալ առ դրունսն։ Եւ բժշկեաց զբազում հիւանդս՚ի պէս պէս ախտից, և դևս բազումս ե-հան, և ոչ տայր խօսել դիւացն. զի գիտէին զնա թէ Ք՟ս ն է։

ՄԷ Աւետարանն՝ որ ըստ Ղուկասու։

Եւ եղև ընդ աւուրսն ը՟ այ-նոսիկ՝ ել ՚ի լեառնն կալ յա-ղօթս, և հանէր զգիշերն ՚ի գլուխ



յա

յաղօթսն այ։ Եւ իբրև այգ եղև,
կոչեց զաշակերտսն իւր և ընտրեց
'ի նոցանէ երկոտասանս. զորս և
առաքեալս անուանեաց։ Զսիմօն՝
զոր և պետրոս անուանեաց. և
զանդրէաս զեղբայր նորին, և զյա
կոբոս, և զյօհաննէս. և զփիլիպ
պոս և զբարթուղիմէոս։ Եւ ըզ
մատթէոս. և զթովմաս. և զյակո-
բոս ալփեայ. և զսիմօն զկոչեցեալն
նախանձայոյզ։ Եւ զյուդայ յա-
կոբայ և զյուդայ իսկարիովտացի
որ եղև իսկ մատնիչ։ Եւ իջեալ
նոքօք հանդերձ 'ի տեղի մի տափա
րակ և ժողով աշակերտացն նր և
բազմութի յոյժ ժողովրդեանն յամ
հրէաստանէ և յերուսաղեմէ և
յայնմ կողմանէ և 'ի ծովեզերէն
տիւրոսի և սիդօնի, Որք եկին լը
սել 'ի նմանէ և բժշկիլ 'ի հիւան-
դութեանց իւրեանց և նեղեալքն

 յայ

յայսոց պղծոց բժշկէին։ Եւ ժո_
ղովուրդն խնդրէր մերձենալ 'ի նա
զի զօրութի̅ բազում ելանէր 'ի նմա_
նէ և բժշկէր զամենեսին։

## ՄԷ Աւետարան՝ որ ըստ Յօհաննու։

Յետ այսորիկ տօն էր Հրէից, և
ել Յս̅ յԵ̅մ։ Եւ յԵ̅մ 'ի
պրոպատիկէ աւազանին որ կոչիւր
եբրայեցերէն բեթհեզդա հինգ
սրահ։ Յորս անկեալ դնիւր բազ_
մութի̅ յոյժ հիւանդաց․ կուրաց․
կաղաց․ գօսացելոց, որք ակն ունէ
ին ջրոցն յուզելոյ։ Եւ հրեշտակ
տն̅ իջանէր ըստ ժամանակի յաւա
զանն, և յուզէր զջուրն․ և որ նախ
'ի շարժումն ջուրցն իջանէր յաւա
զանն․ բժշկիւր, ոչ ունելով զնշան
հի անդութե։ Եւ անդ էր այր մի,
որոյ Լ̅ Ը̅ ամ էր 'ի հիւանդութե̅ իւ_
րում։



Զնա

Ոնա իբրև ետես Յս՟ զի անկեալ
դնիւր․ և գիտաց եթէ բազում
ժամանակք են այնուհետև, ասէ
ցնա կամիս ողջ լինել։ Պատասխա
նի ետ նմա հիւանդն․ տէր ոչ զոք
ունիմ եթէ յորժամ ջուրքն յուզի
ցի արկցէ զիս յաւազանն և մինչ
ես գանդաղիմ այլ ոք քան զիս յա-
ռաջագոյն իջանէ։ Ասէ ցնա Յս՟․
արի՛, առ զմահիճս և գնա։ Եւ
ողջացաւ այրն․ և յարեաւ էառ
զմահիճս իւր, և շրջէր․ և էր շա-
բաթ յաւուրն այնմիկ։

## Աղօթ․ Կիպրիանոսի Հայրապետին․

Ես կիպրիանոս ծառայ այ՟՝ ան-
տիոք քաղաքէ՝ ազգաւ հելլենա-
ցի՝ առն հեթանոսի որդի․ անուն
հօր իմոյ եդեսիա, և մօր իմոյ կղօ-
դիա։ յորժամ ծնայ ես յորովայնէ

 մօր

մօր իմոյ • Ծնողքն իմ նուիրեցին
զիս յուսումն չա՟ծց՝ լինիլ պաշտօնէյ
կարգն և ետուն զիս յուսումն գի
տուե՟, և զա՟մ ուսայ զկախարդականն
գիրս առաւել քան զսիմոն և զնա_
քովք և եղև հասու ա՟մ նշմարագի
տուեցն • Թագաւորանգամ եղանէի
'ի յօգն և կախարդութ՟ գնայի 'ի
վե՟ր ծովուն • և էին 'ի հրամանս իմ
ա՟մ գունդք դիւաց • և զոր ինչ խոր
հէի, առ ժամայն կատարէին վաղ
վաղակի : Խլանէի յապարանսն և
առնէի զշաւիղս արեգականն և
զլուսին յերեսս իմ, և երեսք իմ
փայլէին իբրև զարեգակն, և կա_
տարէի զկամս դիւացն մեծաւ ու_
րախութ՟, և էի մոլորեալ 'ի գործս
չարութե՟ և ոչ ճանաչէի զա՟ծ, և
զա՟մն գայթակղեցուցանէի յա_
ղագս չար արուեստին իմոյ : Ո՟րո_
մանս աչաց ցաւ առնէի : Ոմանս

գըլխացաւ առնէի։ Ոմանս քա-
մոտ առնէի։ Ոմանս ջերմնոտ
առնէի։ Ոմանս հիւանդ առ-
նէի։ Ոմանս յաղգաց վարէի.
Ոմանց զգոյն յերեսացն առնէի.
Ոմանց զմիտքն մոլորեցուցա-
նէի։ Ոմանս ատելի առնէի իւր
ազգին։ Այր և զկին կռուեցնէի
և ատել տայի զմիմեանս և այլ բա-
զում չարիս դիւականս առնէի ՚ի
վերայ երկրի. և այնչափ հմուտ եղէ
դիւացն՝ որ ոչ մնաց գործ և ոչ
խորհուրդ զոր ես ոչ գիտացի. գի-
տացի և զբազմութիւն դիւաց զի որպէս
ջուր որ ելանէ յաղբերացն. այնպէս
ելանէին դևքն և պատրէին և խա-
բէին զորդիս մարդկան. զոր տէր Աստ-
հեռացուսցէ ՚ի ծառայէս իւր։
Նա կապէի կախարդութեամբ իմով.
Ոմանց երկինս՝ որ ոչ տայր զանձրև.
զերկիր՝ որ ոչ բուսուցանէր զսեր-

մանիս իւր ։ Ո՛ սրբազանն և զօրա-
ւորինն և զատուեալդ հաստատութի՛ ։
Ո՛ ծառս՝ որ ոչ տայր զպտուղս
իւր ։ Ո՛ ծով՝ որ ոչ տայր զալիս
իւր ։ Ո՛ ձկունս՝ որ ոչ լողային ՚ի
ծովս ։ Ո՛ գետս՝ որ ոչ գնային ։
Ո՛ աղբիւրս՝ որ ոչ բղխէին ։
Ո՛ թռչունս՝ որ ոչ վերանային
յօդս ։ Ո՛ անասունս՝ որ ոչ յղա-
նային ։ Ո՛ յղիս՝ որ ոչ ծնանէին ։
Ո՛ կանայս՝ որ ոչ յղանային ։ Ո՛ է-
ռունս՝ որ ոչ զեռային ։ Ո՛ վաս-
տակաւորս՝ որ ոչ վաստակէին ։
Ո՛ վաճառականս՝ որ ոչ վաճառէ-
ին ։ Ո՛ օդն՝ որ ոչ թնդայր, և կա-
պէի զերկինս օդօքն և զեր՛կիր
ամ զեռնօք . որ ոչ անցանէին ընդ
հրամանս իմ. ՌՃՀԹ . աղանդք կա-
նանց և կախարդաց, և արանց ա-
ղանդաւորաց ։ Ո՛րձակ երկրա-
սաւորդ մի որ էր անունն ազգաւէ-



դա

դոս • գեղեցիկ կուսի մի ցանկա-
ցաւ որոյ անուանն էր յուստինէ
առնուլ զնա 'ի կնութիւն և ոչ կարէր •
և առաքեաց բազում պատուականս
ինչս ոսկի և արծաթ և գեղեցիկ
հանդերձս • և կոյսն ոչ հաւանեցաւ
և դարձոյց անարգանօք • և առեալ
երիտասարդն զամենայն ինչսն գնաց առ.
կիպրիանոս և նա ասէ ես դարձու-
ցանեմ զնա 'ի կամս քո, և առաքեաց
զմի 'ի դիւացն առ յուստինէ և
նա սբ աղօթիւքն հալածեաց զնա,
և ապա առաքեաց զդևն պոռնկու-
թեան, և եղեալ դիւին 'ի կերպարանս
ծեր և պառաւ կնոջ, և գնացեալ
'ի դուռն սբ կուսին 'ի գիշերի և
ասէ՝ ով դուստրիկ իմ՝ զգիշերս
ընդ քեզ աղօթեցից և մնեալ դևն
առ կոյսն և աղօթեցին զողջ գիշերն
միաբան • և ապա ասէ սանայ ով
դուստրիկ 'ի կուսութեան ով է վարձն

 ըն-

ընկալեալ։ Իսկ թէ չէր ամուսնա
ցեալ, ուստի՞ էին նախահարքն
մարգարէքն առաքեալքն հայրա-
պետքն. Ե՛կ երթիցուք առ մեծն
կիպրիանոս և ամուսնացի՛ր, և զա
րմացեալ կոյսն որ սատանայական
էր բանին. եհան զնշան խաչին ՚ի
վերայ մարմնոյ իւրոյ և կնքեաց
զինքն, և դևն հալածեցաւ և ա-
ներևոյթ եղև ահի՛ւ և դողութ՟ե
և գնաց առ կիպրիանոս։ Իսկ կիպ
րիանոս ասէ ցդևն զի՞նչ է որ եր-
կուղիւ դողաս և սասանիս. ասէ
դևն. տեսի զնշան խաչին և երկիւ-
ղիւ դողամ և սասանիմ. ասէ կիպ
րիանոս՝ զի՞նչ է նշան խաչին որ
զարհուրեցուցանէ զքեզ. Ասէ
դևն ցկիպրիանոս. երդուի՛ր որ ոչ
ուրանաս զմեզ. ես ասեմ քեզ զա՟մ
խորհուրդս մեր և զնշան խաչին.
և երդուեաւ կիպրիանոս ՚ի սուտ և

՚ի անոտի պաշտամունս նոցա՝ եթէ ոչ
ո թանամ զձեզ։ Իբրու սկսաւ դևն
պատմել մի ըստ միոջէ զամ և ասէ.
ա̄ծ զմարդ ստեղծ ՚ի հողոյ զա‿
դամ. և ասաց եկա՛յք հրեշտակք և
հրեշտակապետք երկի՛ր պագէք ձե‿
ռագործին իմոյ ադամայ. նա դասքն
սադայէլի հպարտացան և ոչ խո‿
նարհեցան երկի՛ր պագանել ադա‿
մայ։ Բարկացաւ ա̄ծ ու[յ]ն և զեր‿
կինքն պատառեաց և զսադայէլն
դասն ՚ի վայր ելից զանթիւ զօրս
մեր։ և շինեցաք ապարանս և դը‿
ժոխք անուանեցաք, և զհոգիս ար‿
դարոց և մեղաւորաց մինչև ցյօ‿
հաննէս մկրտիչն զա̄մ ըմբռնեցաք
և՚ի դժոխս ածաք։ Յետոյ առաքեց
ա̄ծ զորդին իւր միածին որ եկն և
ծնաւ ՚ի ս̄բ կուսէն մարիամայ ա̄ծ.
ածնէն, զմեռեալս յարոյց. զբորոտս
սրբեաց. զկաղս գնացոյց. զկոյրս

լուսաւորեաց. և այլ բազում սքան-
չելիս ա՟ր. մատնեցաւ ՚ի յուդայէ
և խաչեցաւ ՚ի հրէից և թաղեցաւ,
և յարեաւ ՚ի մեռելոց, և խաչիւն
իւրով զդժոխս աւերեաց և համ
բարձաւ առ հայր յերկինս, և գա-
լոց է միւսանգամ դատել զկենդա
նիս և զմեռեալս. և խաչիւն իւրով
լուսաւորէ զա՟մ արարածս ։ Հա-
ւատացեալքն ուրախանան և ու-
րացողքն կոծեսցին ։ Այս է նշան
խաչին զոր տեսանեմք և զարհու-
րիմք և սոսկամք. և ապա Կիպրիա
նոս ՚ի միտս իւր եկեալ ասէ, թէ
նշան խաչին այդչափ զօրութի ունի.
ապա խաչեալն ո՟րչափ ևս առաւել ։
Ես հաւատամ ՚ի Ք՟ս, և ՚ի զօրութի
Խաչին, և յա՟ծ հայր ամենակալ
զի նա միայն է ճշմարիտ ա՟ծ, և
կուռքն դևքն են և սատանայ ։ Եւ
ապա այրեաց զա՟մ գիրս կախար-



դու-

դուն իւրոյ, և գնաց առ Եպիսկո-
պոս քաղաքին, և մկրտեցաւ և
ձեռնադրեցաւ քահանայ, և զկնի
աւուրց եպիսկոպոս. և աղօթեաց
և ասէ՝ Տէ՛ր ա͞ծ իմ սիրեցի զքեզ
և ծանեայ ՚ի ձեռն ս͞բ հայրապետին
Մատթէոսի և յուսատիանէ կու-
սին զզօրութի͞ն խաչի քո՝ ողորմած
Տ͞ր ողորմեա՛ ինձ ո͞ր աւազակին.
քաւեա՛ զիս ո͞ր զԶաքէոսն. ար-
դարացո՛ զիս ո͞ր զմաքսաւորն. հա՛ն
զիս ՚ի գբոյ մեղաց ո͞ր զԵրեմիա
և զԴանիէլ ՚ի գբոյ բանտին. չիջ-
յինէն զբռնութի͞ն թշնամեացն՝ ո͞ր
զհուրն երից մանկանց ՚ի բաբե-
լոնի ի հողմաբեր ցօղովն օրհնութե͞ն.
Եւ զոր յառաջն կապէի չար և դի-
ւական աղանդօք, այժմ արձակեա
եմ զնոսա կապելոյն հրամանաւն ո͞յ.
կացցեն երկինք և երկիր ՚ի հաստա-
տուն իւրեանց. հող զբոյս դալար

 բու-

թուսուցանէ · Ծառք զպտուղս
իւրեանց տան · և ա̃մ կապերտքն
արձակումն ազգաց յԱ.նուն ամէ_
նաւոր Երրորդութ̃ն ո̃յ։ Երդմնե_
ցուցանեմ զքեզ սա̃նյ՝ անուամբն
Ա.Ծ ։Հ̃որ Ո.̃որ տ̃ն մերոյ · և 'ի
ռ̃և տ̃ Ա.նուննն ո̃յ՝ որ զԱ.դամն և
զԵ.ւա բազկացոյց · և բնն դասս
հրեշտակացն՝ որ ելանեն և իջանեն
'ի արիպօլիս քաղաքն, և յանուն
սերովբէիցն՝ որ կան 'ի սպասաւո_
րութ̃ որդւոյն ո̃յ, և թևասքօղելով
ծածկեն զերեսս իւրեանց և երգեն ·
Սբ՝ սբ՝ սբ՝ տ̃ր զօրութ̃ց՝ լի են եր_
կինք և երկիր փառօք քո։ Երդմնե
ցուցանեմ զձեզ՝ չար դևք և որդիք
սատանայի՝ որ էք օգնական նմ̃ կա_
խարդաց և չարագործաց · Երդմնե
ցուցանեմ զձեզ սատանայք 'ի գեղեց_
կութ̃ն Ա.դամայ · 'ի վայելչութ̃ն
դրախտին · 'ի խոնարհութ̃ն ա̃մ սբ.ց ·



և

և 'ի սէր տմ մարտիրոսացն 'ի պա_
տարագն Աբելի 'ի կոչումն զանուն
տն Ենովսայ . 'ի յարդարութեն
Նոյի . 'ի քահանայութիւն Մելքիսեդեկի 'ի հաւատս և 'ի հիւր_
ընկալութիւնն Աբրահամու 'ի
կատարման Սահակայ 'ի պատրանն
Յակոբայ` 'ի գեղեցկութիւնն
Յովսեփայ` 'ի համբերածումն Եղի
այի` 'ի հնազանդութեն Եղիսէի`
'ի նախատակն Մովսէսի` 'ի պատ_
մուճանն Ահարօնի` որ զարդա_
րեալ էր երկոտասան ակամբք . որ
օրինակ էր երկոտասան Առաքե_
լոցն . Ք՜ի . 'ի քնարին և 'ի սաղմոսն
Դաւթի 'ի մաստանեն Սողոմոնի`
'ի գաւազանն Մովսէսի` և յա_
ջողման Ահարոնի . յաւետիսն
Գաբրիէլի զոր ետ ձբ կուսին Մա
րիամու . 'ի ծնունդն և 'ի մկրտու_
թիւնն Յ՜սի Ք՜ի որ մկրտեցաւ

 'ի .

'ի յորդանան 'ի Յովհաննէ, և 'ի
նր հրամանքն որ հրամայեաց ան-
դամալուծին թէ՝ արի' առ զմա-
հիճս քո, և 'ի թուքն որ եբաց
զաչս կուրին, և 'ի գալուստն յա-
ւանակաւ յերուսաղէմ 'ի յարու-
թիւնն Ղազարու 'ի մահուանն
և 'ի խաչելութիւն քնի 'ի գե-
ղարդն և 'ի բևեռն քնի 'ի փշե-
ղէն պսակն և 'ի հեղումն արեան
որդւոյն այ որ հեղաւ 'ի վերայ սբ
խաչին ։ Երդմնեցուցանեմ և կա-
պեմ և հալածեմ զքեզ չար դևք ։
Յարութեմբն և համբարձմամբն
քի, և 'ի Գալուստ հոգւոյն սբյ,
և այլակերպութբն քի որ այլա-
կերպեցաւ 'ի թաբօր լերինն, ոչ
ունիմք իշխանութիւն դևք և ա-
ղանդք և կախարդութիւնք ա-
րանց և կանանց մերձենալ 'ի ծա-
ռայս այյ ։ Երդմնեցուցանեմ զքեզ

 'ի

'ի բանն անճառելի 'ի լոյսն ան-
ճառելի · 'ի Թագն անպատմելի ·
որ հրեշտակացն զարհուրելի · 'ի
Թագաւորն սոսկալի · 'ի մատանին
Սողոմոնի՝ 'ի կապանսն պղնձի ·
'ի տախտակն Մովսէսի · 'ի գրեալ
մատամբն Տէրունի · 'ի յաղօթս
Ահարօնի · 'ի պատմուճանն ցան-
կալի · 'ի սր̄ Սինայ · 'ի քառասնօ-
րեայ պահս Մովսէսի · սր̄ արեանն
մանկանց բեթղեհեմի · 'ի յարգա-
րութին Նոյի · 'ի հաւատսն զով-
սի · 'ի կարգն Մելքիսեդեկի · 'ի
յաւետիսն Գաբրիէլի · 'ի յա-
Թոռն չորեք կուսի · մինն մարդոյ
էր նմանի և իմաստուն բանակա-
նի · մինն կերպ էր առիւծի , տե-
սիլն հուր կիզելի · մինն ահեղ և
սքանչելի , տեսիլն հրեղէն եզին
ունի , միւսն Թև արծուի , ահեղ
տեսիլ զարմանալի որ 'ի վերայ

 Նրա

Նըստեալ բազմի տէր և ած ամի ։
ուր այս անուանքս ոք յիշեսցին
գիրս և հրամանս պատուհասի · չարն
'ի բաց միշտ հալածի , կապք և
աղանդըք լուծանին 'ի ծա-
ռայէս ոյ անձն ։

Ցոյց մեզ տէր ողորմութիւնս
քո և զփրկութիւնս քո
տուր մեզ ։
Որպէս զի մեծ են գործք քո տր
և յոյժ խոր են խորհուրդք
քո ։



## Նորանէլւոյն Յոհաննու Գառնեցւոյ ասացեալ առ սբ̄ Ածածինն ։

Ածածին մայր քի̄ և ծնող միածնի հօր · բարձող անիծից , և պարծանք ազգի մարդկան ։ Յերկնայնին զօրացն երանեալ և հողեղէնացս օրհնաբանեալ · միջնորդ այ̄ և մարդկան · հաշտարար ընդ արարածս · Թագ և պսակ կուսից և համարձակ բարեխօս վն̄ մեղաւորաց ։ Մ՝եղուցեալս ոգի · անկանիմ առաջի քո , և աղաչեմ զքեզ · իբրև զնոյն ինքն զմարմնացեալն ՚ի քէն , բարեխօսեա վասն իմ առ բանն այ̄ զոր ծնար մարմնով · զոր կերակրեցեր զկերակրիչն ամ̄ կենդանեաց ։

Աղաչեմ վն̄ մեր զանդրանիկդ քո ։ Կաց կանգուն առաջի նորա ցուցմամբ սբ̄ ստեանցդ ։ Կացի առաջի



նորա

նորա միջնորդ և բարեխօս զմահ-
կունթն իւր ։ Ո՜ կաթամբ սնանելին
որ մանուկ ։ Ո՜ ուսովք բառնալին ։
Ո՜ դրկօք գգուելին ։ Ո՜ շրթամբք
համբուրելին ։ Ո՜ ողջագուրելին, որ
աղայ ։ Ո՜ երթ և գալն քո ընդ նմա
յեգիպտոս, և՛ի նազարէթ և յիւր
տեղիս ։ Ո՜ տրտմութե̄ տագնապելին
քո վն̄ նր̄ ՚ի ժամ չարչարանացն ։
Ո՜ յանձնարարութե̄ քո առ յօ-
հաննէս, յորժամ հեղուսել կայր
վշտօք ՚ի վերայ խաչին ։ Ո՜ դառն
արտասուացն քո զոր վտակօրէն հե-
ղուիր յորժամ տեսանէիր զնա վը-
տանգեալ ՚ի վերայ խաչին. վն̄ որոյ
մանկատատանն տառապէիր կսկծա-
կան, վն̄ չարչարանացն ։ վն̄ սաստիկ
ծարաւ մահուն ։ վն̄ ճաշակման լեղ-
ւոյն՝ քացախին ։ վասն տեսանելոյն
զքրտնատեսակ արեան իջուածին ։
վն̄ իջուցանելոյն ՚ի խաչէն արխ-

նազանդ մարմնոյն ։ վս̃ դիւաղար
դեալ գնելով ՚ի ք̃ս գերեզմանն ։
Մաղթեմ զքեզ մայր լուսոյ ․ հայ֊
ցեա զթողութի̃ մեղաւորիս ։
Դնիր աղերս առաջի նր̃ պատմենա֊
կիրս չարչարանաց խաչոյ ․ զոր վս̃
իմ կրեաց բարերարն և մարդա֊
սէրն ։ Խնդրեցո՛ ս̃բ կոյս զայսքան
չարչարանացն ․ զի թերևս ողորմես֊
ցի և ներեսցէ բազմամեղիս ․ և
ջնջեսցէ զձեռագիր իմոց յանցա֊
նաց ։ Եւ իւր անմեղ մատամբն
և ս̃բ արեամբն դրոշմեսցէ զգե֊
րեալս ՚ի դպրութի̃ կենացն ան֊
վախճանից ընդ ա̃մ ս̃բս իւր ։
Եւ քեզ երկրպագութիւն ՚ի մե֊
ղուցեալ ոգւոյս ամենաս̃բ կոյս
բարեխօս լեր Ծառայիս
ա̃ծ ․ ամէն ։

Նորին աղօթք վ՛ն ճանապարհորդի:

Առաջնորդ կենաց ճանապարհ ճշմարտութի՛ն Տէր մեր Յ՛ս Ք՛ս. Որ առաջնորդեցեր յովսէփայ ՚ի յեգիպտոս, և իսրայելացւոց ընդ ծովն կարմիր. և մովսէսի ՚ի լեառն սինէական, և ժողովրդեանն յերկիրն պարգևացն և կղէոպասացն ճանապարհակից եղեր յէմմաւուս: Աղաչեմ զքեզ Տէր առաջնորդեա՛ ինձ և եղբարց իմոց գնալ խաղաղութեամբ զառաջիկայ ընթացս. փրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամոյն, և բարի առաջնորդեա՛ ՚ի դէմ եդեալ տեղին. զի դու ես ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք մեր և քեզ փառք և երկրպագութիւն այժմ և՛՛:

Աղէրս վն չաւաղ ծնանէլոյ ·

Ած բոլորից · անճառ մեծուն · հզօր զօրուն · ամենակարող բարերարութն ։ Առ քեզ հայի մր ակն տեսողի ։ Նայեաց 'ի պաղատանս հառաչման ձայնի քոյոց ծառայից և աղախնեաց · ոչ աննայի լուար հեծութե , և ետուր նմա զմեծն սամուէլ · և յովակիմայ և աննայի զամենօրհնեալն մարիամ, և զաքարիայի և եղիսաբեթի պարգևեցեր զաւակ զյհ կարապետ և մկրտիչն յովհաննէս ։ Նոյն ողորմութբդ քո պարգևեա և տուր սմ

զաւակ բարի ծռյիս քո ամէն ։

Զայն բարբառոյ յանապատի , ոբ Յովհաննէս դու ամլորդի · անմեղ գաւթին անարատի , վկայ եղեր դու կրկնակի · Բարեխօսութբ սբց միջնորդելիցն Մովսէսի և ահարոնի ·



Նա

Նաթանայ և սամուելի · դաւիթ
ամովս միքիա աբդի · յօնան նա֊
ւում ընդ ամբակում · սոփոնիա
և անգէի · մաղաքիայ ը դանիելի ·
զաքարիաս ընդ եզեկիելի · և ամ̃
ս̃բց դասի · պահապան լիցի ծա֊
ռայիս ա̃յ ամէն ։

Աղօթք առ ս̃բ ստեփաննոս նախա֊
վկայն ·

Ի քէն հայցեմք արտասուացն ·
նախավկայ ս̃ն առաջին · ս̃բ
Ստեփաննոս բացող երկնի · տեսող
զք̃ն յաջմէ ծնողին · լե̃ր բարեխօս
արեամբ քոյին · տուր մեզ հանգիստ
ի յանկողնին · արթուն լինիլ յա֊
ղաւօթին · բարեբանել զայն
անքննին ։

## Աղօթք հօրանոր առ Երկնային Հայրն.

Ընդ անման արարչին սպասա_
ւորք անմարմինք՝ վերին զօրացն
դասապետութիւնք. Աթոռք. Քե_
րովբէք, և Սերովբէք. Տէրութիւնք,
Զօրութիւնք և իշխանութիւնք.
Պետութիւնք, Հրեշտակապետք, և
Հրեշտակք. Միքայէլ և Գաբ_
րիէլ Պետք վերնական զօրացն դա_
սուց. որք անլռելի ձայնիւ փա_
ռաբանութ̃ի մատուցանէք ամենա_
ս̃բ Երրորդութեանն. և երեքսր_
բեան ձայնիւ եղանակէ զերգս
ասելով ողորմեա՛ դու ստեղծեր
մի՛ կորուսաներ. զգործս ձեռաց
քոց մի՛ անտես առներ. օգնական
և պահապան լերուք ծառայիս
ք̃ո ամէն:

## Աղօթք առ Տէր զինաւորն ՊԲԻ.

Բարեխօսութեամբ սրբ զօրավարացն, սրբոյն սարգսի զօրավարին և որդւոյ նորա մարտիրոսին, և սրբոյն թէոդորոսի զօրավարին. գէորգայ զօրավարին և մերկերիոսի զինաւորին. անդրէի զօրավարին. և չորից զինաւորացն՝ բաստոսի ասերի ատիգի և բասիլիդեայ. սրբոյն մինասայ, երմոգինեայ և գլաբոսի, և սրբոց ատոմեանց. ոսկեանց և սուքիասանց. խարիթեանց, և այլ ամ սրբոց բարեխօսութեամբ պահեա զծառայս քո ամէն։

## Աղօթք չար նայուածէ և չար լեզուէ.

Տէր ած մարդասէր մարդասիրի հօր որդի դու ես պահապան և օգնական յուսացելոցս ՚ի

քեզ ողորմութեամբ քո 'ի ծա-
ռայս և պահեա՛ անփորձ 'ի չարէ
և անսայթաք յորոգայթէ երևելի
և աներևոյթ թշնամւոյն պահեա՛
'ի չար աչաց և չար լեզուէ 'ի
սրոց և ա̃մ հարուածոց երևե-
լեաց և աներևութից պահեա՛
զծառայս քո
ամէն ։

## Աղօթք սրբոյն Գրիգորի Լուսաւորչի ։

Աղաչեմ զքեզ ք̃ս փրկիչ տ̃ր
հայեա՛ յիս և ողորմեա՛ և
շնորհեա՛ 'ի ներումն բազում ա-
նօրէնութե̃ իմոյ ։ քանզի անարգեցի
զա̃մ բարիսն զոր արարեր յիս 'ի մա̃ն
կութե̃ իմմէ ։ զի զախմարս և անի
մաստս արարեր անօթ գթութե̃ ։
Յաճախեաց յիս շնորհքն քո , և լցի
զքաղց իմ և զծարաւն իմ զոգա-

 ցոյց

ցոյց, և լուսաւորեաց զխաւարեալ
միտս իմ, և ժողովեաց ՚ի մոլորութե
զխորհուրդս իմ և եկեց ՚ի ծոց իմ։
վ՟յ անկեալ երկրպագանեմ առ՟ջի
քո՝ խոստովան եղեալ զբարերարութե
քումն, և աղաչեմ դադարեցո ա-
ռիս զխոստումն շնորհի քո, և պա-
հեա զնա ՚ի գանձի քում։ զի դար-
ձեալ տացես ինձ զնա յաւուրն յայն-
միկ։ Ո՛ի բարկանար ինձ մարդա-
սէր զի ոչ համդուրժեմ սպառնա-
լեաց քոց. յաղագս որոյ և աղաչեմ
ժտելով. զի առաւել քան զչափն
յանձախեաց յիս շնորհք քո. վն զի
և լեզու իմ տկարացեալ ոչ կարելով
խօսել զնմանէ. հիացեալ և միտք
իմ ոչ բերելով զբազմութի ալեաց
նորա։ Կերպարան և ձառագայթ
օրհնելոյ հօրդ. դադարեցո՝ առ իս
՚ի հոսանաց նր. զի իբրև զհուր բոր-
բոքեալ բոցակիզեացէ զերիկամունս

 իմ.

իմ և զմիտս իմ. և անդր դարձեալ
պարգևեա ինձ զնա և կեցո զիս
յողորմութեան քում. մի՛ յիշեր զանօ-
րէնութիւնս իմ. յանդգնիմ և հայ-
ցեմ. տուր ինձ զխնդրուածս իմ,
և արա առ իս օթևան օրհնել հարբ-
քո. յաւուր յայտնութեան քո։ շնոր-
հեա ինձ քո զհայցուածս իմ. զի
դու միայն ես տուօղ կենաց իմոց,
և քեզ ընդ հօր հոգւոյդ սրբոյ փառք՝
այժմ յաւիտեանս ամէն։

Մաղթանք առ սբ լուսաւորիչն մեր։

Լուսաւորիչ հայր պարծանաց. ընկալ զբանս զայս մաղթա-նաց և աղաչեմ զհայրն փա-ռաց. ջնջել զգիր մեր յանձանաց։ Այլև բարեխօսութեամբ գ̃ճ և ժ̃ը հայրապետացն և ուղղափառ ե-պիսկոպոսաց աղօթիւքն՝ պահեա տ̃ր ա̃ծ զծառայս քո ամէն։

Աղօթք առ տէրն մեր եկեղեցւոյ,
մեր Յօհաննու ոսկեբերանի։

Տաճար այ և բնակարան սբ հոգւոյն. 'ի քեն սբ աւազանաւն կոչեցայ յորդեգրութն հօրն երկնաւորի։ Այսօր 'ի քեզ կազմեցաւ պատարագիլ գառն անարատ։ Արդ ես դիմեալ եկի առ դուրս քո. և աղաչեմ զքեզ, մաքրեա զիս վերստին լուացմամբ, և սրբեա 'ի մեղաց և արա արժանի մտանել առաջի սբյ սեղանոյդ յերկրպագութն։

Սբյն Գրիգորի Նարեկացւոյն ընդդէ
մահարար դիպաց այս նուագ Աղօթից
և դիպուածոյ ջերմնատապնաց
ախտաժամաւորութեանց մղ փարատիչ։

Արդ՝ այսքանեաց անբաւելից հրաշից հանդերձիչ հայր ամե_

 նայն

նաստեղծ ։ Ծնունդ ահաւոր ։
Ձայն սարսափելի ։ Կոչումն ընտա-
նի ։ Բան համբուրելի ։ Ողջունումն
սքանչելի ։ Հրամանն սոսկալի ։
Լռութն անքննելի ։ Գոյութն անձա-
ռելի ։ Իսկութն անբաւելի ։ Զօ-
րութն անզննելի ։ Կամք ամենաբա-
րի ։ Տէրութն անսահմանելի ։ Մե-
ծութն անչափելի ։ Բարձրութն ան-
բովանդակելի ։ Ծանրութն անկշռե-
լի ։ Առաւելութն անհասանելի ։
Կատարած որդւոյ հայրութե այլ
ոչ նախագրութե ։

Եւ՝ և ՚ի ձեռն քոյդ անպարա-
գիր զօրութեդ սաստեալ տագ-
նապօղ և դիւական տենդիս ջեր-
մութե, որ սպրդեալ մուծաւ ընդ
մեղաց ։ զի փախիցէ ՚ի մարդոյս ։
զարհուրեալ ՚ի սխրալի և յանբա-
ւելի արեանդ վտակի գառինդ
երկնաւորի որով սրսկեալ միանգամ

 ՚ի

'ի մշտնջենաւորս համայն մաքրե-
ցաք ։ Այլ արդ՝ յայս պատկառելի
խոնարհութեն արարչակերտս խոր
հրդոյ՝ ամաչեցաք սանյ 'ի գործս
չարեաց իւրոցն հրեշտակաց ։ Տան-
ջեցի եւ հալածեցի ․ հեռացեալ
եւ արտաքս առաքեալ 'ի շինուածոյ
խորանէ քումդ բնակութե յարտա-
քին խաւարին ։ Այլ ջնջել մաքրեմ
զարտասուս ողբոց 'ի դիմաց մերոց ․
եւ զհառաչումն ձայնի հեծութե
'ի սրտից մերոց ։ Այլ յիշատակաւ
հարման հեղուսից ․ քաստնափու-
շամանատեսիլ ոդէպահանջից ․ ո-
րով պնդեցաւ միածինդ քո յաշտա-
րակ խաչին՝ ցաւեցի չարին ։ Այլ
'ի կողահերձ սայրասուր սլաքէ
ուժգին բախմանէ՝ որով զվէրն
մեծ ընկալաւ ․ իսպառ սատակեսցի
սկզբնաչարին մահու ։ Այլ զխո-
նարհեցոյց զգովեալն գլուխ յա-



ման

ւանդելն ըզհոգին 'ի ձոց քո բարձ-
րեալ, ապստամբութի անբարի բա-
րուցն բելիարայ 'ի կոր կործանեցի
ամբն հերքել 'ի կորուստ ։ Նու զե
զօղէլ ծածկեցաւ անմահն իսկութ
յորովայնի երկրի, այսու ամբար-
ձեալն հպարտութի կործել զաւո-
զին 'ի յատակս մահու դժոխոց մէ
թին սատաներին յաւեալ դիւսեցէ ։
Նու յիշեսցէ զառաջին հարուածն
անբժշկական․ որով մահացաւ դի-
մամարտութի Թուխից վիշապին՝ կե-
նարարն կրիւք ամենազօրին ։ Ա՛յ
զի 'ի փառս քո հայր ողորմութեան
իբր 'ի գովեստ որդւոյ քոյ հոգ-
ւոյդ սրբով զայս խոստովանիմք ։
Քանզի ոչ պիտոյ էինչ սոսկ զօրութ
եանի զմիուամէն՝ առ մի խորհրդա-
կանն խորութի ։ Նմա զանսկիզբն
բանդ անձնաւոր՝ ընդ անժամա-
նակդ հօր փառաւորեմք ։

Այլ քեզ միայնոյ որ երրորդութեդ հաւ. ասարապատիւ տրութեդ համա բուն անբաժին ինքնութեդ, որ հնա րաւորի գոհութի՝ զորութի՝ և ան ձառ վայելչութի մեծութե՝ բարեփի ձակ հարթութե՝ զուգակշիռ հաւա սարութե յաւիտեանս ամէն ։

Նորին նաղըմանք զօրաւոր ընդդէմ ամ չարեաց ։

Ընկալ քաղցրութե տր ած ՚ լոր՝ զդառնացողիս զաղաչանս ։ Սաստիր գթութե՝ առ պատկառելս դիմօք ։ Փարատեա ամենապարգև զամօթական տխրութիս ։ Բարձ յինէն ողորմած զանըմբերելի ծան րութիս ։ Ընջրպետեա հնարաւոր զմահացու կրթութիս ։ Խաւարեա մերժ յաղթօղ զխաբողին համառ թիս ։ Խացադրեա վերնայքն զմո

լեռոյն մառախուղ ։ Կնքեա կեցու-
ցիչ զկորուսչին ընթացմունս ։ Որ-
ձեա ծածկատես զըմբռնողին չար-
գումունս ։ Խորտակեա անքննին ·
զմարտողին դիւեցմունս՝ Մնագրեա
քո անուամբդ զլուսանցոյց երդ-
յարկիս ։ Պարփակեա քո ձեռամբդ՝
զուսաստայ տաճարիս ։ Գծագրեա
քո արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս ։
Կերպացո զքո նշանդ ’ի հետս ե-
լից մաղթողիս ։ Ամրացո քո աջովդ՝
զհանգստեանս խշտիս ։ Մաքրե-
ցես ’ի հաղբից զծածկարան անկող-
նոյս ։ պահեսցես քո կամօքդ զտա-
ռապեալ անձն հոգւոյս ։ Ընխարդախ
արասցես զքո շնորհեալ շունչ
մարմնոյս ։ Կացուսցես շրջափակ՝
զպար զօրուդ երկնայնոյ ։
Կարգեսցես ’ի դիմի ընդ դեմ դի-
ւացն դասու ։ Տուր հանգիստ
քերկրուն · մահահանգոյնս նիրհ-

 ման

մանն ՚ի խորութ գիշերիս ։ Բարե_
խօսութբ հայցուածոց սրբուհւոյ
Ածածնիդ եւ ամ ընտրելոց ։ Ամփո
փեալ պարուրեա զպատուհան ան_
սուլթեց ։ Զգայարանացս իմաս_
տից ։ Անդարհուրելի զետեղմամբ՝
՚ի ծփական խռովութեց ։ Կենցաղա
կան գրաւմանց ։ Անդրջական երա_
զոց ։ Խոլականաց ցնորից ։ Յիշա
տակաւ քո յուսոյդ՝ անմխասելի
պաշտպանեալ ։ Եւ սթափեալ վե_
րստին ՚ի ննջմանէ ծանրութեց ։
Ամենազգաստ արթնութբ, հոգե_
նորոգ զուարթութբ ՚ի քեզ արձա_
նացել զայս ձայն մաղթանաց բուռ
մամբ հաւատոց, քեզ՝ ամենօրհնել
թագաւոր փառաց անճառից, փա_
ռաբանողաց երկնագունդ խմբից՝
երգակցեալ՝ յերկինս անքել ։ Զի
դու փառաւորեալ ես յամ արարա
ծոց • յաւիտնս յաւիտնից ։ Եւ լիցի
պահապան ծառայիս քո ամէն ։ 

ԱՂՕԹՔ ՕՐՀՆԱՒՈՐ ՍԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱ-
ՐԵԿԱՑՒՈՅՆ ։

Ո՛րդի այ կենդանւոյ օրհնեալդ յաւմ. Հօրդ անհասի անքննելի ծնունդ։ Որ անկարանայ առ ՚ի քէն և ոչ ինչ։ Որ ՚ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քո փառաց։ Հալին մեղք։ Հալածին դևք։ Ջնջին յանցանք։ Խզին կապանք։ Խորտակին շղթայք։ Կենդանանան մահացեալք։ Բժշկին հարուածք։ Ողջանան վէրք։ Բառնին ապականութիւնք։ Տեղի տան տխրութիւն։ Նահանջին հեծութիւնք։ Փախնու խաւարն։ Մեկնի մէգն մերժի մառախուղն։ Փարատի մըռայլն։ Սպառի աղջամուղջն։ Մերանայ մութն։ Գնայ գիշերն։ Տարագրի տագնապն։ Չքանան չարիքն. հալածին յուսահատութիւնք։

Եւ թագաւորեսցէ՛ ձեռն քո ամե-
նակալ քաւիչդ ամի · որ ոչ եկիր
կորուսանել զմարդկան հոգիս ,
այլ կեցուցանել : Խնայ ինձ զան-
թիւ չարիսն իմ բզում ողորմութեդ
քո : Ո՛վ դու միայն ես երկնի ան-
ճառ և երկրի անզննին · ՚ի տարր
գոյից և յեզր ծագաց աշխարհի :
Սկիզբն ամի և յամի ամի՛ լրման
օրհնեալդ ՚ի բարձունս : Եւ քեզ
ընդ Հօր Հոգւոյդ Սրբոյ վայելէ
փառք յաւիտեանս ամէն : Եւ
լիցի պահապան :

## Աղօթք շնորհալւոյ Ներսէհն Սրբոյն Պատրիարքի : ԻԴ :

Ով յաւիտենական , բարերար
և ամենակալ · ստեղծիչ լու-
սոյ , և յօրինիչ գիշերոյ · կեանք ՚ի
մահու , և լոյս ՚ի խաւարի , յոյս

ակնունողաց, և երկայնմտութ՟ի տա_
ռապելոց ։ Որ ամենարուեստ
իմաստութ՟ քո՝ դարձուցանես յայգ
զստուերս մահու, աննուաղ ծա_
գումն և անմուտ արեգակն, քան_
զի ոչ զօրէ ծածկել զփառս տ՟էրու_
թե՟ քո՝ խաւար գիշերոյ ։ Որում
կրկնի ծունր երկրպագութ՟ե ամ՟ ե_
ղելոց՝ երկնաւորաց և երկրաւորաց,
և սանդարամետականաց ։ Որ լսես
զհեծութիւն կապելոց, և հայիս
յաղօթս խոնարհաց, և ընդունիս
զխնդրուածս նց. ած՟ իմ և թա_
գաւոր իմ. կեանք իմ և ապաւէն
իմ. յոյս իմ և վստահութ՟ի իմ. յս՟
քս՟ ած՟դ ամ՟ի ։ Որ՟դ հանգուցեալ՝
ի հոգիս ոգ՟ց, մխիթարութ՟ի վշտաց.
և քաւարան մեղուցելոց. որ գիտես
զամ՟ յառաջ քան զլինել նց. առա_
քեա զպահպանողական զօրութ՟ի
աջոյ քո, և փրկեա զիս յերկիւղէ



գի

գիշերի և 'ի դիմէ չարէ ։ Որպ̃ զի զյիշատակ սոսկալի և սբ̃ քո անուանդ՝ միշտ համբուրել շրթամբք հոգւոյ ըղձուն̃ շնչոյ , կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որք կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ ։ Եւ 'ի դրոշմէ խաչի քոյ նշանիդ , զոր ա̃ծային արեամբ քո ներկեալ նորոգեցեր , և 'ի նոյն շնորհ որդեգրութե̃ զմեզ մկրտեցեր , և 'ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր ․ այսու պարգևօք ա̃ծականօք՝ ամաչեսցէ սատանայ ․ քակտեսցին մեքենայքն ․ բարձցին որոգայթքն ․ պարտեսցին մարտուցե̃լքն ․ պակասեսցին զէնքն սայրասուրք ․ մերժեսցի մէգն ․ փարատեսցի խաւարն ․ մեկնեսցի մառախուղն ։ Նազուկ քո հովանաւցի , և աջ քո կնքեսցէ ․ վ̃ն զի գթած ես և ողորմած , և անուն քո կոչեցեալ է 'ի վերայ ծառայից քոց ։

Ու քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով
փառք և իշխանութի յաւիտեանս
յաւիտենից․ ամէն։

## Աղերս առ սուրբ առաքեալսն ։

Անմահ դասունն հզօրի․ որ միշտ
զննեալ և կենդանի․ երկոտա-
սան դասուանցդ խմբի․ ձեզ
այս աղերս մատուցանի։ Ս̃բ Պետ-
րոսի և Անդրէի․ երկուց եղբարց
նախակոչի, Յակոբոսի, Յօհան-
նիսի ձկնորս որդւքն զեբեթի․
Փիլիպպոսի, Բարթուղիմէի․ Թո-
մայի և Մատթէոսի․ Յակոբ ալ-
փեայ․ Թաթէոսի, Շմաւոնի,
Մատաթէի, Երկոտասան Առա-
քելոց․ Ի Ք̃է պսակելոց․ այս է
բաղձանք սրտից մերոց։ Փրկել
զմեզ յայսոց պղծոց։ Ու լիցի պա-
հապան ծառայիս քո, ամէն։


Պյոք



Պարծանք հաւատացելոց ՚ի ք͞ս և գո-
վեսք ս͞բ խաչին որ երևեցաւ յ͞էմ յա-
ւուր կիւրղի հայրապետին, ՚ի մայիսի է͞ :



Ա.ՉՆ ՔՐԻՍՏՈ

նէից լոյս ։ Խաչն կուրաց առաջնորդ ։ Խաչն մոլորելոց դարձուցիչ ։ Խաչն աղքատաց մխիթարութի͞ւ ։ Խաչն մեծատանց սանձ ։ Խաչն ամբարտաւանից քակտումն ։ Խաչն ախոյեան դիւաց ։ Խաչն բանսարկուին յաղթութի͞ւ ։ Խաչն մանկանց դաստիարակ ։ Խաչն աղքատաց մեծութի͞ւ ։ Խաչն անյուսից յոյս ։ Խաչն նաւավարաց նաւապետ ։ Խաչն տագնապելոց հանգիստ ։ Խաչն պատերազմողաց պարիսպ ։ Խաչն հայր որբոց ։ խաչն վերակացու այրեաց ։ խաչն անիրաւաց դատաւոր ։ խաչն արդարոց խոր-



հրդ

հրոդակից ։ խաչն նեղելոց հան-
գիստ ։ խաչն տղայոց պահապան ։
խաչն արանց գլուխ ։ խաչն ծե-
րոց կատարումն ։ խաչն խաւարե-
լոց լոյս ։ խաչն թագաւորաց վայել-
չութի ։ խաչն զէն յաւիտենական ։
խաչն բարբարոսաց ազատութի ։
խաչն անխրատից իմաստութիւն ։
խաչն անօրինելոց օրէնք ։ խաչն
մարգարէից քարոզ ։ խաչն առա-
քելոց պատմութի ։ խաչն մարտի-
րոսաց պարծանք ։ խաչն վանակա-
նաց պահապան ։ խաչն կուսանաց
զգաստութի ։ խաչն քահանայից
ուրախութի ։ խաչն եկեղեցւոյ
հիմն ։ խաչն տիեզերաց զգուշութի ։
խաչն մեհենից աւերիչ ։ խաչն բագ-
նեաց կործանիչ ։ խաչն ձէնձերաց
տապականիչ ։ խաչն հրէից գայթակ-
ղութի ։ խաչն ամբարշտաց կորուստ ։
խաչն տկարաց զօրութի ։ խաչն հի-


ւան

ւանդաց բժշկութ̃ն. խաչն բորոտաց սրբիչ. խաչն անդամալուծաց ուղղիչ. խաչն պագշոտաց բժշկութ̃ն. խաչն քաղցելոց հաց. խաչն ծարաւելոց աղբիւր. խաչն մերկաց վերարկու. խաչն անբարբառ բարեխօս ծառայիս ա̃յ, ամէն.

Ր֊նուսխայ ՄԷ նշանացն որք էն բարեխօսս մեան մեր.

Բարեխօսութ̃բ Ր֊Ծայրին ա̃ծ նշանին. և անբարբառ բարեխօսին Ք̃ի վ̃ն ազգի մարդկան Սրբոյ կենաց խաչափայտին Ք̃ի. Ր֊ապակի ա̃ծ նշանին. Ս֊արագայ ա̃ծ նշանին. Երևման ա̃ծ նշանին. Հաղբատայ ա̃ծ նշանին. Սանկոյ ա̃ծ նշանին. Կաղբայ ա̃ծ նշանին. Ր֊դինեայ ա̃ծ նշանին. Սերբեխոյ ա̃ծ նշանին. Սմարաւայ ա̃ծ նշանին.

Գանձասարայ սբ նշանին : Եւ
ւրի սբ գեղարդի : Գետ արգել
սբ նշանին : Ապարանից սբ նշա-
նին : Կարմրակ սբ նշանին : Սքան
չելագործ սբ նշանին : Ոսիծաւան
սբ նշանին : Ախթամարայ սբ նշա
նին : Սանահնու սբ նշանին : Սա-
րոսի սբ նշանին : Կիպրոսի սբ նշա
նին : Կոստանդիանոսի սբ նշանին :
Եւ տապանակի սբ նշանին : Սրոց
հռոմոց սբ նշանին : Կոստանդնու-
պօլսոյ սբ նշանին : Հապէշու և
Եգիպտոյ սբ նշանին : Հացունեաց
սբ նշանին՝ որ ՚ի գալստեանն յա-
ռաջագոյն : Պայլակեայ սբ նշա-
նին : Հնդու սբ նշանին : Կապլե-
կայ սբ նշանին : Պիլեւու սբ նշ
շանին : Հռիփսիմէի սբ նշանին :
Լոգու սբ նշանին : Սարի սբ նշա
նին : Եւ այլ ամ սբ նշանացն որք
ընդհանուր աշխարհս իցեն ասցեն



սբ

որ և արժանաւոր աղօթիւքն և
անբաւ բարեխօսութեամբն.
ողորմեա ծառայիս քո:

## Հրաշագործութիւն ԻԵ. չոր տարր:

Սւ. Ի.ն բժշկեաց ՚ի ժողովըր դենէն բազում հիւանդս. լուսաւորեաց զկոյրս. մարդկանէ զդևս. սրբեաց զբորոտս. գնացոյց զանդամալոյծն՝ որ ՚ի բեթ հեզդայ անկեալ դնիւր ԼԸ տարի. և յարոյց ՚ի մեռելոց զչորեքօրեայ մեռեալն. և այլ անթիւ սքանչելիս և հրաշագործութիւնս արար. նոյն ողորմութեամբն իւրով հեռի արասցէ ՚ի մէնջ զգլխացաւն. աչաց ցաւն. ականջացաւն. ակռայի ցաւն. սըրտացաւն. [illegible]ջաց ցաւն. կշտացաւն. փորացաւն. ծնկնացաւն. և յամ ցեղ ցաւոց ազատեսցէ՝ և օգնական և պահպան լիցի ծառայիս քո ամէն:

Աղօթք վս Եղջայէ և Ալէ որ ոչ մեր-
ձենայ ՚ի ծառայս քո :

Տէր Յս Քս . ամենազօր ողորմած .
Լեր պարիսպ և աշտարակ հզօր
յերեսաց թշնամւոյն . զի որպէս մորեխ
խռովութեանցն կարծեաց երկիւղին
ամենայն գիւղական չարեաց որք ՚ի
ծննդոց կանանց տղայկանն զար-
հուրեցուցանելով ալք կոչեցան
գիշատեսին երևմամբք պէս պէս
ախտիւք թլմրութեամբ խելագ-
նացս առնելով . և որ ինչ հաղբից
նոցին իցեն չարաձնար որոգայթք .
հերքեալ հալածեսցին ՚ի դիմաց
ծառայիս քոյ, Ամէն .

Ս Երամին ցաւելուծած չըչին հեծա-
ւթե՞ նորին հաշտողի, առ նոյն աղերսա-
մաղթանաց բանի ։ Ի խորոց սրտից
խօսք՝ ընդ այ̃ ։ Բան · ՁԹ ։

ՈՎ Տէր · կեանք և արարիչ ·
ողորմած · գթած · լոյս ·
երկայնամիտ · անոխակալ ·
մարդասէր · ամենագութ · պարգևա-
տու · փրկիչ · օրհնեալ · գովեալ ·
բարեբանեալ · Դարան ամրութե̃ ·
պատսպարան վստահութե̃ · առանց
նենգութե̃ բարի · առանց խաւարի
ճառագայթ · քաւիչ մեղաց · ողջա-
ցուցիչ վիրաց · անհասանելեաց հը-
նարք · անմատչելեաց հպաւոր · ան-
յուսութե̃ ելք · անուն քո խոստո-
վանեալ՝ այ̃ որդի · և հօր քո ընդ
քեզ հզօրի և անհաւորի, և հոգ-
ւոյդ ամենակալի՝ և ը̃ քեզ երկր-
պագելոյ փառք և պաշտօն գոհա-
բանութե̃՝ յաւտ̃նս · ամէն ·

Ս Երրորդին ցուցեալ հրճին հեծու-թեն՝ նորին հաճոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ած։ Բան . Լ .։

Բարեբանեալդ ած երկնաւոր, միայն արարիչ, տր ամենակալ. մեծութիւն ահեղ. գթութիւն օրհնաբանելի. ողորմութիւն խոստովանելի. բարերարութիւն երկրպագելի. խնամակալութիւն պաշտելի. մարդասիրութիւն տօնելի. պահպանութիւն խնկելի. բարձրեալ անքննին. մերձաւոր կամարար. ապաւէն անկասկածելի. մխիթար սրտից. փարատիչ վշտաց. ապաքինիչ ցաւոց. սպառումն վհատութեց. բարձումն պարտեաց. փոխարկիչ կարեաց. կարգաւորիչ կրից. յարմարիչ բանից. սանձարկու լեզուի. շրջադրութիւն ընչից. կացուցիչ հագագի.



աւ

ամփոփիչ խորհրդոց • կրթարան կա-
մաց • արձանացուցիչ յուզմանց •
հանդարտութիւն մրրկաց • խաղաղութիւն
ծփանաց , որ ունիս զթևոց ամէն-
ընթաց իշխանականիս , և իմաստու-
թեամբ նուաճեալ առ քեզ
դարձուցանես ։

2 Պահպանեալ միշտ երախտա-
ւոր , որ հեզութեամբ անհպարտութեամբ
երկայնամտեալ հանդչիս տենչանօք
անճառ հրաշիւք՝ յանձինս սրբոց ։
Խնդաւոր էից համայնից , ամենա-
ծանուցեալ գթած • սկզբնահայր
և նախաշաւիղ սիրոյն ընթացից •
ճանապարհ կենաց , որ առաջնորդես
քաղցրութեամբ՝ դիմելոյս 'ի լոյսդ վերին ։
Ջեռանկալու մեծ վստահութիւն , որ
ոչ թողացուցանես գայթակղելոյս
'ի վայր կործանել • յուսոյ կերպա-
րան , ճշմարիտ առ հաւատչէին ա-
ղաչողաց մատանց յայտնի երևեալ •

ապաւինութի հանգստեան , որ ոչ
երբէք մատնես վտանգի դատա_
պարտութե : Ազատութի շնոր_
հաձիր , որ տաս լիապէս առանց փո
խատրութե փրկանաց . առատութի
աննախանձելի , որ քոյին փառաւո
րութբ՝ զանարգ նիւթ հողոյս ձո_
խացուցանես : Պայծառութիւն
անստուեր , որ ճառագայթիւք ա_
հեղ բարձրութե պարածածկեալ
զթշուառս՝ կրկին բարգաւաճ առ_
նես : Քաւիչ մեղանաց բազմաց ,
որ զհերքեալս ՚ի փրկուէ առաջնումն
պայծառութբ նորոգեալ՝ վերստին
վայելչացուցանես : Հնարաւոր դիւ
րահաս առ ամ անբաւ գերամբար_
ձութի յաւէտ յառաջեալ . եւք
վստահութեան առ խոստացելոցն
վայելս . երանութի անձկալի , յոր
զկենդանութիւն շնչոյս լքանելն է
ախորժելի , զի զքեզ գտից՝ կեն_

դանի ։ Կամք անփոխադրելի՝ առ
'ի քաւութի գերոյս զօրացեալ ա-
մենազօրելի . անսխալելի դեղ կե-
նաց , որ և մեռելոց՝ ընաւին եղ-
ծելոց առնես զսքանչելիս ։
Ամենաստեղծ աներկբայելի , որ
զհուրբ կիզեալն , և զհողմով հո-
սեալն , և զժանեօք գազանաց ծա-
լխեալն , 'ի քթթելական նովին հի-
թականութեամբ անպական յարու-
ցանես ։ Անհաւասար համարձա-
կութի , յորում ամենօրէն պանծա-
նօք պարծելն է իրաւացի ։
3 Հայեաց տէր՝ յերկնից զուարթ
քաղցրութե՝ յամենակործան
վտանգ նեղելոյս , և արա՛ անդորր
հանգստական դիւրաւոր՝ 'ի բազ-
մատագնապս հեծութենէ ։ Եւ
զյարուցեալ գումարս սատակչացն ,
եթէ սպառազէնք այսական դըժ-
նեայ հնարաւորութեան բուռն

մարտակցաց պատկանեալ զէնուք
եթէ մեղաց տգեղ՝ և քո ատելի
կերպարանք, եթէ ցաւոց և ախ-
տից վատնիչ և կորստական նշմա-
րանք, մերժեսցես հանցես հա-
ցես խափանեսցես և հալածես-
ցես՝ հեռի սահմանաւ իսպառ
տարագրեալ անդարձ որոշմամբ
վերստին կորստեանն. և կառուս-
ցես կացուսցես նպաստակ կենաց
և ամուր մահարձան՝ զնշան խա-
չիդ՝ ապաւինելոյս ՚ի քեզ՝ փրր-
կութիւն։ Եւ յայսմ անպարտ
և անպարտելի արուես-
տից ահաւորիդ մեծութե, լուծ-
ցին որոգայթքն գաղտնածածուկ
սատանայականք. կապտեսցին մե-
քենայքն. վատնեսցին գայթակ-
ղութիքն. խայտառակեսցին հաղ-
թիցն դրութիւնք. յայտնեսցին
երևոյթք որսոյն. գլոյքն նենգո-

զին ծուղակք · վերասցին վարմն
վերարկուք · տոչորեսցին որոմանցն
բոյսք · նզովեսցին բռնաւորին չա-
րաբանութիւնք · կորեսցի՛ լար խա-
բէութեան ՚ի մահ որսողին · պարտես-
ցին պատրողին բանսարկութիւնք ·
պակասեսցին զէնք զրպարտողին ·
անկցին սուսերք մահաբերին · սու-
զեսցին սադրողին պատրաստութիւնք ·
արձակեսցին տուռունք տագնա-
պողին ։ Լ․ լլկեսցին սուտ կեր-
պարանք կեղծաւորին · սատակես-
ցին խորոխտականացն խիստ յար-
ձակմունք · ցրուեսցին կցորդու-
թիւնք կերչացն · բաժանեսցին
ազինք աւազակացն · քայքայես-
ցին բոյլք բարբարոսացն · քան-
դեսցին ամրոցք ապստամբողացն ·
արգելցին ամպրոպք յանդգնե-
լոցն · փարատեսցին փորձողին անձ-
րեւք · հալեսցի՛ և ցամաքեսցի՛ ե-

ղեամն ապանդաւորին։ Խորտա-
կեցի՛ եղջիւր գոռոզին․ մանրեա-
ցի՛ն ամբառնալիք դրօշիցն կերպա-
րանաց․ փշրեցի՛ն ամբարհաւա-
ճութիւք հպարտացելոցն․ Նահան-
ջեցի՛ն դիմեցմունք ճակատելոցն․
քակտեցի՛ն միաբանութիւք զօրացն
բելիարայ․ թէ անմարմինք և եթէ
մարմնաւորք, փախիցեն ընդ նոյն
ճանապարհ ՚ի մի շաւղաց հետոց՝
յեօթն տարակոյս, ՚ի գուբն ինձ
փորեալ՝ ինքեանք ընկճեսցին։
Յեղանակեսցին ձմերունք ձանձ-
րացուցչին․ հատցի՛ կապն կցոր-
դութեան՝ մշտաջան աւազակին․
Նողկասցի՛ մտացս կայից՝ համբոյր
շողոքորդին․ ընդ միջեալ մեկնեա-
ցի՛ն՝ նետաձգութիւնք նեղջին․
կացցէ ՚ի սասանման՝ նաւ խարդա-
խողին․ խլեսցի՛ն յարմատոց անտի՝
ատամունք խածանողին։

4 Սն փայտիդ օրհնութեան կե-
նաց, յորում պրկեցար Ածդ
անըմբռնելի . յիշատակաւ բևե-
ռացդ, որով ՚ի գործի մահուն մա-
ծուցար՝ արարիչդ երկնի և երկ-
րի . արեամբդ տէրունականաւ,
որով զվիշապն մեծ կարթիւ ա-
ծեալ որսացար . լեղւոյն դառնու-
թբ, զոր արբեալ՝ զդեղատուութն
կորուսչին արտաքս հեղեր . պատ-
մաբանութբ ըղձական Ճաւխք
կրիցն սարսափելեաց, որով զլրբու-
թիւն հակառակողին ըմբերանել
ամաչեցուցեր . անուամբդ անհա-
սականաւ ամենայնիւ անթարգ-
մանելւոյդ, յորմէ դողան և դա-
տապարտին սոսկացեալ սաստիկ
սարսափմամբ՝ բնութիւք ամ ե-
րևութից և աներևութից, եղիցին
այս ամենայն պարգևք շնորհաց՝
խոստովանելոյս ՚ի պաշտպանութն,

'ի բժշկութիւն և 'ի քաւութիւն ։ Ու մահաբեր դառնաթոյն օձին , և որ 'ի նմա ազդեաց ախեղերադաւ չարութիւնն , 'ի սատակումն եղիցի նորին ․ Նոյն ինքն 'ի կորուստ և յանբժշկական հարուած տանջանացն՝ սովաւ մատնեսցի՛ , կապեսցի՛ և ըմբռնեսցի՛ ։ Եղիցի՛ ողորմութիւն ստեղծողիդ ընդ իս , և շունչ ոգւոյս իմ ընդ քեզ անբաժանօրէն կապաւ միացեալ 'ի մի ։

5 Ու որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի՝ մաղթանաց գուշման՝ աղօթից հայցման , ծերոյ և տղայոյ , կուսի և երիտասարդի , և եթէ յաղախնաց ոք պաղատեսցի ա̃ծսիրաբար , հաւասարապէս անաչառութեամբ ընկալցի՛ն 'ի քէն մասն երանութեան՝ պարտուց ազատութեան , հաստատեալ վերստին

յանարատութիւն նորոգ մաքրու-
թեան, նկարեալ դարձեալ զքոյդ-
կերպարան անփոփոխելի ։
Ո՜հ տիրապէս՝ ճարաւոր զօ-
րեղ անպատում անհաս անքննա-
լի, տեսցես տատանօր 'ի հաւա-
չանս կողկողանաց այսր հեծու-
թեան, որ 'ի բոլորից շրթանց ըն-
ծայեալ քեզ մատուցանի, վասն
հօր քոյ երկնաւորի և բարերարի,
և հոգւոյդ սրբոյ փառակցի և
կենդանատուի ։ ծածնիդ բարե-
խօսութեամբ, և խնդրուածովք
ամենայն սրբոց ։ Զի դու ստեղ
ծեր զամենայն ։ և 'ի քէն եղեն ա-
մենեքեան ։ և դու տիրես ամենայ
նի ։ և քեզ փառք յամենեցունց
միշտ յիսկութէ անժամանակ եր-
րորդութեդ, զուգակցապէս փա-
ռաւորեալ յանբաւս, և յաւիտե-
նից յաւիտեանս ։ ամէն ։


Ա է

Մ էրտէն ցաւելուած չըչին հեծու-
բէ՞ նորէն հաճողէ, աա նոյն աղերս
ժողովրդոց բանէ ։ 'Ի խորոց սրտից
խօսք՝ ընդ Այ ։ Բան · Գ Ը ·

Արեգակն արդար · ճառագայթ
օրհնեալ · լուսոյ կերպարան ·
փափագ անձկութե̃ · բարձ-
րեալ անքննին · զօրեղ անպատում ·
բարւոյ բերկրութիւն · յուսոյ
տեսութիւն · գովեալ երկնաւոր ·
թագաւոր փառաց · քս̃ արարիչ ·
խոստովանեալ կեանք ։ Եւ արդ՝
զթերութիւն վրիպանաց բազմա-
սխալ ձայնի եղկելոյս՝ ամենազօրդ
բանիւ լցեալ մատուցելս յաղերս
հաճութե̃ հօր քում բարձրելոյ ։
Որ վասն իմ 'ի փորձ եկիր անի-
ծից , կերպարանեալ զիմ նմանութի̃
ամենևին կենաց օրհնութե̃ , վեր-
նոց և ներքնոց բարեխնամող տե-


սուչ

սուրբ համայնից․ Ո՜վ թէ յանձն
առնէր մեռանիլ վասն իմ՝ ա՟ծ և
որդ՟ բոլորեցուն, որչափ հաճես-
ցիս առնել և այժմ փոխանդաւորս
կրից կարեկցել, ընդ իմ պարտա-
ւորիս միշտ աղօթելով ազգակցա-
մարմնոյդ առելոյ 'ի մէնջ առ հա-
մապատւիդ քո հայր։

2 Եւ վասն արեանդ պատուականա-
նի միշտ մատուցելոյ 'ի հաճութ՟ի
կամաց տուաքչիդ՝ բարձցի՛ն վը-
տանգք մեղուցեալ դատապարտե-
լոյս․ թողցի՛ն պարտիքն․ ապաքի-
նեսցի՛ ամօթն․ մոռասցի՛ն պատկա-
ռանքն․ բարեգործեսցի՛ն դատակ-
նիքն․ սատակեսցի՛ն որդունքն․ վե-
րասցի՛ լալն․ հանդարտեսցէ՛ կըր-
ծումն տատամնոցն․ սպառեսցի՛ն
ողբքն․ հատցի՛ն արտասուքն․ մեր-
ժեսցի՛ սուգն․ հալածեսցի՛ խա-
ւարն․ պատնեսցի՛ հուրն սաստ-



կու

կութեան . հերքեցի՛ն տանջանա_
րանքն բազմօրինակք ։
3 Կեցէ՛ն գթութիւնք կամո_
ղին և պարգևողին կենաց ամե_
նից . ծագեսցի՛ լոյսդ . արագեսցէ՛
փրկութիւնդ . հասցէ՛ օգնութիւնդ .
ժամանեսցէ՛ այցելութիւնդ .
կանխեսցէ՛ ցօղդ ողորմութեան ,
յառաջեսցէ՛ արբուսցէ՛ . զան_
դաստանս պապքեալ՝ անկեալ ոս_
կերացս թշուառութեամբ 'ի վիհն
մահու . ծաղկեցուսցէ՛ պտղաբե_
րեսցէ՛ բաժակդ երկնաւոր ա_
րեան կենարարիդ՝ զերկիրս խնա_
մեալ աւուրն լուսոյ , որ անծախա_
պէս միշտ պատարագի յիշատակ
կենաց փրկութեան հոգւոց նըն_
ջեցելոց ։ Ո՛ի ամենայնիւ մա_
հացեալ հոգիս մարմնովս մեղաց՝
շնորհօք քո՝ կըլթած , 'ի քեզ զօ_
րացեալ քև նորոգեցայց , զատեալ

՚ի մեղաց անձանց կենդանութեամբ ՚ի յարութեանն արդարոց, հօր քում օրհնեցելոյ։ Ընդ որում քեզ փառք, և հոգւոյդ սրբոյ բարեբանութիւն՝ վայելչական գոհութեամբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւի֊
տենից. ամէն։

## Գոհաբանութիւն առ Երրորդութիւնն · ՀԲ ·

Գոհանամք զքեզն՝ ով ամենասուրբ երրորդութիւն հայր և որդի և հոգիդ սուրբ, որ ստացեր արա֊ ցուք մարդ ըստ պատկերի մերում, և առեր հող յերկրէ, և փչմամբ օրհնեալ շնչոյ քո՝ գոյացուցեր ըզ֊ մարդն ադամ. վասն որոյ օրհնեմք զմեծութիւն քո։ Գոհանամք զքեզն տէր, որ զմարդն ադամ զարդարե֊ ցեր եօթնարփեան շնորհօք, և եր֊


կո

կոտտայան փառօք․ վն որոյ օրհնեմք
զշնորհս քո։ Գոհանամք զքեզ
տր, որ 'ի դրախտն եդեմ եդեր զա_
դամ անճառելի խնդութբ, և հի_
ահրաշ խնդութբ․ վն որոյ օրհ_
նեմք զարարչութիւն քո։ Գոհա
նամք զքեզ տր, որ յետ պատրելոյն
ադամայ՝ յարգելայս անուն օձէն,
և արտաքսելոյն 'ի դրախտէն, որով
'ի դժոխս դրաւեցաւ, ազատեցեր․
վն որոյ օրհնեմք զփրկութիւն քո։
Գոհանամք զքեզ տր, որ առաքե
ցեր զանդրանիկն քո՝ զմիածին
բանն, որ վն մերոյ փրկութե խա_
չեցաւ, թաղեցաւ, յարեաւ, համ_
բարձաւ․ վն որոյ օրհնեմք զմեծ_
մարդասիրութի քո։ Գոհանամք
զքեզ տր, որ զքո մարմին և զքո
արիւն նր՝ պարգևեցեր մեզ կերա
կուր հոգւոյ, և կենդանացուցիչ․
վն որոյ օրհնեմք զպարգևս քո։

 Գոհ

Գոհանամք զքեզ տ՟ր. որ զմկրտու
թ՟ի ուսուցեր 'ի յորդանանէ, և կո_
չեցեր 'ի խաւարէ 'ի լոյս, և ետուր
զորդեգրութիւնն վերին. վասն
որոյ օրհնեմք զշնորհաբաշխութ՟ի քո.
Գոհանամք զքեզ տ՟ր, որ. է. խոր
հուրդ եկեղեցւոյ կազմեցաւ 'ի
քոյին շնորհէ, և խոստովանութ՟ե
թողութ՟ի շնորհեցեր. վ՟ն որոյ օրհ_
նեմք զաստուածապարգև գթութ՟ին քո։
Գոհանամք զքեզ տ՟ր, որ անձրև
և ցօղ տաս երկրի, և բուսանի հաց
և հանդերձ, և ա՟մ մսեղեաց կերա_
կուր. վ՟ն որոյ օրհնեմք զբազմա_
բաշխ ողորմութ՟ին քո։ Գոհանամք
զքեզ տ՟ր, որ տաս յաջողութ՟ի վա_
տակոց մերոց, և զշնորհս արուես
տաւորաց. վ՟ն որոյ օրհնեմք զբազ_
մարուեստ տուչութ՟ի քո։ Գոհա
նամք զքեզ տ՟ր, որ միշտ քաղցրութ՟ե
նայիս յարարածս քո, և օրս ըստ օրէ



շնորհ

շնորհես զբազմազեղ ողորմութ՟ի քո·
վ՟ն որոյ օրհնեմք զանչափ գթութ՟ի
քո ։ Պաղատանամք զքեն տ՟ր, որ մե-
ղաւորաց և զղջացելոց թողութ՟ի
շնորհես, ներես, և ոչ եղծանես·
վ՟ն որոյ օրհնեմք զանյիշաչարութ՟ի
քո ։ Պաղատանամք զքեն տ՟ր, որ զե-
ղանակս տարւոյն, ամառն և զձ-
մեռն, աշունն և գարունն, արա-
րեր ըստ բնութ՟ե մերում· վ՟ն որոյ
օրհնեմք զարարչագործութ՟ի քո ։
Պաղատանամք զքեն տ՟ր, որ յայսմ ա-
մի ես՝ ապրեցուցեր զմեզ՝ անվր-
դով, անահ, և անկասկած· վ՟ն որոյ
օրհնեմք զտ՟րութ՟ի քո ։ Պաղատանամք
զքեն տ՟ր, որ զմեզ 'ի մահտարա-
ժամէ, և յամ՟ պատահարաց պահե-
ցեր · վ՟ն որոյ օրհնեմք զպահպա-
նութ՟ի քո ։ Պաղատանամք զքեն տ՟ր, որ
'ի հրկիզութ՟է, 'ի հեղեղէ, 'ի շարժէ, 'ի
կայծակէ, 'ի խորշակէ, և 'ի սաստկ



մա

մինչ ապրեցուցեր. վ՟ն որոյ օրհ-
նեմք զապաւինութիւն քո։
Գոհանամք զքէն տ՟ր, որ օրհնե-
ցեր 'ի լեառն ձիթենեաց զկաթու-
ղիկոսունս, զպատրիարգունս, և
զեպիսկոպոսունս. որ ճրագ և լոյս
եղէն աշխարհի. վ՟ն որոյ օրհնեմք
զշնորհաբաշխութիւն քո։ Գոհա-
նամք զքէն տ՟ր, որ քահանայութ՟ի
ընծեռեցեր ադամեանս բնութե՟՝
որ հրեշտակացեր կարգ, յաղագս
թողութե՟ յանցանաց մերոց. վ՟ն
որոյ օրհնեմք զփրկութիւն քո։
Գոհանամք զքէն տ՟ր, որ զսարկա-
ւագունս, զտխագօղս, և զջահըն-
կալս սահմանեցեր. վ՟ն որոյ օրհ-
նեմք զլուսաւորութիւն քո։
Գոհանամք զքէն տ՟ր, որ զբանա-
ւոր հօտ՝ զժողովուրդս քո, ըն-
կալեալ ունիս 'ի ծոց քո, և որպէս
զտապանն Նոյեան ազատես 'ի
հեղե՟

հեղձմանէ մեղաց. վասն որոյ օրհ_
նեմք զգարմանահրաշ գթութիւն
քո։ Գոհանամք զքէն տէր,
որ զմեղուցեալ ժողովուրդս՝ ոչ
պատժես 'ի սաստ քում քաւարա_
նի, այլ զդարձումն նկատես.
վասն որոյ օրհնեմք զերկայնամտու_
թիւն քո։ Եւ վասն մեծի և
բարձու ողորմութեան քո, խոնար_
հեցո տէր զունկն քո 'ի ժամուս
յայսմիկ և տուր մեզ յերկնից 'ի
սրբութենէդ՝ Շնորհ, Ձիր,
Ողորմութիւն. Խաղաղութիւն,
Կարողութիւն, Մեղաց Թողու_
թիւն, Առատութիւն, Փարթա_
մութիւն, Աշխարհիս խաղաղու_
թիւն. Խնդութիւն, Լուսաւո_
րութիւն։ Հաւատ, Յոյս, Սէր.
Սրբութիւն, Առաքինութիւն,
Բարեաց լրութիւն. Հանդար_
տութիւն, Անդորրութիւն, Աղ
 գօ

գօհութիւն · Հաշտութիւն , և օրհնեալ Արքայութիւն ։ Իւ-քեզ ընդ որդւոյ · և ընդ սբ հոգւոյդ վայելէ փառք և պատիւ յաւիտեանս , ամէն ։

Յորժամ երգես՝ զայս ՚ի յատեան,
՚ի խորանաց՝ դէմ յանդիման ·
զգալուստն յիշեա՝ դու յարաժամ,
յիշեալ լիցիս յահեղ օրն
յայն ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

400

